ԵԴ/0394/01/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Երևան քաղաքի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Ժ.Չիչոյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Հ.Պետրոսյան
դատավորներ՝ Ս.Համբարձումյան
Մ.Կիրակոսյան

27 նոյեմբերի 2026 թվական ք. Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալներ Դավիթ Միերի Համբարձումյանի, Գոռ Միերի Համբարձումյանի, Արմեն Ռաֆիկի Մամուլյանի, Կարեն Կարապետի Օհանյանի, Արմենակ Մելսիկի Հակոբյանի, Գոռ Լևոնի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2026 թվականի

հունիսի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ե.Ավագյանի, մեղադրյալ Դ.Համբարձումյանի պաշտպաններ Զ.Հարությունյանի, Գ.Պապոյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2019 թվականի հունիսի 14-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 12200518 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Դավիթ Միերի Համբարձումյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ նախկին քրեական օրենսգիրք) 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Գոռ Միերի Համբարձումյանի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Հարություն Վոլոդիայի Հակոբյանի, Մարատ Նորիկի Պողոսյանի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Արմեն Ռաֆիկի Մամուլյանի, Կարեն Կարապետի Օհանյանի, Արմենակ Մելսիկի Հակոբյանի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, Գոռ Լևոնի Խաչատրյանի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2023 թվականի մայիսի 4-ի և նույն թվականի դեկտեմբերի 12-ի որոշումներով մեղադրյալներ Հ.Հակոբյանի, Գ.Համբարձումյանի և Գ.Խաչատրյանի նկատմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի հոկտեմբերի 23-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է Արմեն Ռաֆիկի Մամուլյանի, Կարեն Կարապետի Օհանյանի, Արմենակ Մելսիկի Հակոբյանի և Գոռ Լևոնի Խաչատրյանի անմեղությունը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված

հանցավոր արարքներ կատարելու մեջ, նրանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, և նրանք արդարացվել են՝ մեղսագրվող արարքները նրանց կողմից կատարված չլինելու պատճառաբանությամբ:

Նույն դատավճռով Դավիթ Միերի Համբարձումյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցավոր արարք կատարելու մեջ, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի 3 (երեք) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ, նշանակված պատժին հաշվակցվել է Դ.Համբարձումյանի՝ 2018 թվականի մայիսի 31-ից մինչև 2018 թվականի հունիսի 2-ը, այնուհետև՝ 2018 թվականի հուլիսի 6-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 17-ն անազատության մեջ գտնվելու 2 (երկու) ամիս 14 (տասնչորս) օր ժամկետը, և վերջնական թողնվել է կրելու ազատազրկում՝ 6 (վեց) տարի 1 (մեկ) ամիս 16 (տասնվեց) օր ժամկետով: Դ.Համբարձումյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց գրավը փոփոխվել է, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը:

Նույն դատական ակտով Գոռ Միերի Համբարձումյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքը վերաորակվել է, և նա մեղավոր է ճանաչվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարք կատարելու մեջ՝ առանց պատիժ նշանակելու՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

2.1. Նույն դատավճռով Մարատ Նորիկի Պողոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարք կատարելու մեջ՝ առանց պատիժ նշանակելու՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

Նույն դատական ակտով վճռվել է նաև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո Ա.Մամուլյանի, Կ.Օհանյանի, Ա.Հակոբյանի, Գ.Խաչատրյանի, Դ.Համբարձումյանի և Գ.Համբարձումյանի նկատմամբ համապատասխան չափերով որպես խափանման միջոց կիրառված գրավը վերադարձնել գրավատուներին կամ

վերջիններիս կողմից լիազորված անձին, և Հայաստանի Հանրապետությունից հօգուտ Ա.Մամուլյանի բռնագանձել 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար: Լուծվել են նաև ապացույցների պահպանման, տնօրինման և վարութային ծախսերին վերաբերող հարցերը:

2.2. Առաջին ատյանի դատարանի նույն օրվա որոշմամբ լուծվել է վերոնշյալ դատավճռի եզրափակիչ մասում թույլ տրված անհստակությունը, Դ.Համբարձումյանի նկատմամբ դատավճռով 6 (վեց) տարի 3 (երեք) ամիս ժամկետով նշանակված պատժի ժամկետին հաշվակցվել է վերջինիս անազատության մեջ գտնվելու ժամանակահատվածը՝ 2 (երկու) ամիս 14 (տասնչորս) օր ժամկետը, և վերջնական թողնվել է կրելու ազատազրկում՝ 6 (վեց) տարի 16 (տասնվեց) օր ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի հոկտեմբերի 23-ի դատավճռի դեմ Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ Ա.Բեգլարյանի, մեղադրյալ Դ.Համբարձումյանի պաշտպան Տ.Աթանեսյանի, մեղադրյալներ Դ.Համբարձումյանի և Գ.Համբարձումյանի պաշտպաններ Վ.Մակյանի, Գ.Պապոյանի և Ա.Կարապետյանի ներկայացրած վերաքննիչ բողոքները ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2026 թվականի հունվարի 5-ի որոշմամբ ընդունվել են վարույթ և նշանակվել քննության:

Վերաքննիչ դատարանի՝ 2026 թվականի հունվարի 19-ի որոշմամբ Դ.Համբարձումյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը փոփոխվել է, և նրա նկատմամբ համակցված կիրառվել են տնային կալանքը, 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամի չափով գրավը և բացակայելու արգելքը:

3.1. Վերաքննիչ դատարանի՝ 2026 թվականի հունիսի 25-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մասնակիորեն բավարարվել են. Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի հոկտեմբերի 23-ի դատավճիռը՝ մեղադրյալներ Դ.Համբարձումյանի և Գ.Համբարձումյանի մասով բեկանվել և վարույթն այդ մասով փոխանցվել է նույն դատարան՝նոր քննության: Նույն դատական ակտով մեղադրյալ Դ.Համբարձումյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված տնային կալանքը փոխվել է վարչական հսկողություն այլընտրանքային խափանման միջոցով, և նա ազատ է արձակվել դատական նիստի դահլիճում:

Միաժամանակ, մեղադրյալ Դ.Համբարձումյանի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոցներ կիրառված բացակայելու արգելքը և 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամի չափով գրավը և մեղադրյալ Գ.Համբարձումյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով գրավը թողնվել են անփոփոխ:

Առաջին ատյանի դատարանի դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

3.2. Վերաքննիչ դատարանի՝ 2026 թվականի հունիսի 25-ի որոշման վերաբերյալ դատական կազմի դատավոր Մ.Կիրակոսյանը հայտնել է տարբերվող հատուկ կարծիք:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2026 թվականի հունիսի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ե.Ավագյանը, մեղադրյալ Դ.Համբարձումյանի պաշտպաններ Զ.Հարությունյանը և Գ.Պապոյանը ներկայացրել են վճռաբեկ բողոքներ, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2026 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմամբ ընդունվել են վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

<u>Վճռաբեկ բողոքների հիմքերը, փաստարկները և պահանջները.</u>

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

I. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ե.Ավագյանի բողոքի փաստարկները և պահանջը.

5. Բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռն Ա.Մամուլյանին, Կ.Օհանյանին, Ա.Հակոբյանին և Գ.Խաչատրյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով արդարացնելու վերաբերյալ անփոփոխ թողնելով և Դ.Համբարձումյանի ու Գ.Համբարձումյանի մասով գործը նոր քննության ուղարկելով, թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են վարույթի ելքի վրա:

Մասնավորապես, բողոքաբերը, վերլուծելով սույն գործով ձեռք բերված և դատարանում հետազոտված ապացույցները, նշել է, որ դրանցով հաստատվում է, որ 2018 թվականի ապրիլի 22-ին Երևան քաղաքի Էրեբունի և Նոր Արեշ փողոցների խաչմերուկում տեղի է ունեցել զանգվածային անկարգություն, որի ժամանակ Ա.Մամուլյանը, Կ.Օհանյանը, Ա.Հակոբյանը և Գ.Խաչատրյանը բռնություն են գործադրել և ջարդեր իրականացրել՝ նպատակ հետապնդելով հասարակության անորոշ շրջանակի անդամների մոտ առաջացնել վախի, սարսափի, կյանքի կամ առողջության համար իրական վտանգի զգացում: Մինչդեռ, Առաջին ատյանի դատարանը վերջիններիս ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով արդարացնելիս, իսկ Վերաքննիչ դատարանն այդ մասով վերոնշյալ դատական ակտն անփոփոխ թողնելիս պատշաճ գնահատականի չեն արժանացրել 2018 թվականի ապրիլի 22-ին Երևան քաղաքի Էրեբունի և Նոր Արեշ փողոցների խաչմերուկում տեղի ունեցած զանգվածային անկարգություններին վերոնշյալ մեղադրյալների մասնակցության և նրանց կողմից բռնություն գործադրելու հանգամանքները հիմնավորող ապացույցները, որոնց համակցությունն, ըստ բողոքաբերի, բավարար է եղել մեղադրյալների մեղավորությունը վերջիններիս առաջադրված մեղադրանքում հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով հաստատված համարելու համար:

5.1. Անդրադառնալով Դ.Համբարձումյանի և Գ.Համբարձումյանի մասով գործը նոր քննության ուղարկելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևություններին՝ բողոքաբերը նախ նշել է, որ Առաջին ատյանի դատարանը սխալ իրավական գնահատական է տվել Գ.Համբարձումյանի արարքին՝ այն որակելով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով մեղադրողի վերաքննիչ բողոքի փաստարկներին, դրանք անհիմն է համարել և դատավճիռը բեկանելու ու փոփոխելու փոխարեն վարույթը փոխանցել է նոր քննության՝ չներկայացնելով բավարար պատճառաբանություններ:

Բողոքաբերն ընդգծել է, որ Առաջին ատյանի դատարանը, իրավաչափորեն հաստատված համարելով Դ.Համբարձումյանի կողմից ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ զենքի գործադրմամբ

խուլիգանություն կատարելու հանգամանքը, անհիմն կերպով Գ.Համբարձումյանի արարքը չի որակել նույն հոդվածի 4-րդ մասով՝ պատշաճ չգնահատելով այն հանգամանքը, որ Գ.Համբարձումյանին և Դ.Համբարձումյանին մեղսագրվել են խմբի կազմում, միմյանց գործողությունները գիտակցելով և փոխլրացնելով, զենքի և որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանություն կատարելու գործողություններ: Այս առումով բողոք բերած անձը նշել է նաև, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ Դ.Համբարձումյանը և Գ.Համբարձումյանը հարազատ եղբայրներ են, և վերջինս չէր կարող չիմանալ եղբոր մոտ զենքի առկայության և գործադրման մասին, ավելին՝ սույն գործով հետազոտված ապացույցներով հաստատվել է Դ.Համբարձումյանի կողմից զենքի գործադրումից հետո Գ.Համբարձումյանի կողմից հանցավոր արարքը շարունակելու՝ դրանով եղբոր գործողությունները փոխլրացնելու հանգամանքը, ինչը ևս հաստատում է Գ.Համբարձումյանի արարքում ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի առկայությունը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, բողոքի հեղինակը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի համապատասխան նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, Դ.Համբարձումյանի արարքին տվել է ճիշտ իրավական գնահատական՝ նրան մեղավոր ճանաչելով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, իսկ Վերաքննիչ դատարանը, վերջինիս մասով բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և վարույթը փոխանցելով նոր քննության, չի ներկայացրել նման որոշում կայացնելու բավարար հիմնավորումներ՝ կայացնելով անհիմն և չպատճառաբանված դատական ակտ:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2026 թվականի հունիսի 25-ի որոշումը, Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի հոկտեմբերի 23-ի դատավճիռը Դ.Համբարձումյանի մասով թողնել անփոփոխ, իսկ Գ.Համբարձումյանի, Ա.Մամուլյանի, Կ.Օհանյանի, Ա.Հակոբյանի և Գ.Խաչատրյանի մասով վարույթը փոխանցել ստորադաս դատարան՝ նոր քննության:

II. Մեղադրյալ Դ.Համբարձումյանի պաշտպան Զ.Հարությունյանի վճռաբեկ բողոքի փաստարկները և պահանջը.

7. Բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2026 թվականի հունիսի 25-ի որոշումը՝ Դ.Համբարձումյանի և Գ.Համբարձումյանի մասով, օրինական և հիմնավոր չէ, քանի որ վարույթը նոր դատաքննության փոխանցելու վերաբերյալ հետևությունները բավարար չափով պատճառաբանված չեն, իսկ ընտրված դատավարական լուծումը չի բխում անմեղության կանխավարկածի, մեղադրանքի ապացուցման բեռի և ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջներից:

Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել դատական ակտը բեկանելու հետևանքները կարգավորող քրեադատավարական նորմերը՝ չհիմնավորելով իր կողմից նոր դատական ակտ կայացնելու անհնարինությունը, իսկ ապացույցների անբավարարությունը չէր կարող ինքնին հիմք հանդիսանալ վարույթը նոր դատաքննության փոխանցելու համար, քանի որ մեղադրանքի ապացուցման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը, իսկ չհաղթահարված ապացուցողական շեմը չի կարող դիտարկվել որպես ապացուցման գործընթացը շարունակելու անհրաժեշտություն:

Բողոքաբերն ընդգծել է, որ Վերաքննիչ դատարանը, վարույթը նոր դատաքննության փոխանցելով, չի հիմնավորել, թե իր կողմից արձանագրված հանգամանքներն ինչու՞ հնարավոր չէր պարզել և դրանց վերջնական իրավական գնահատական տալ վերաքննության փուլում՝ առկա ապացույցների հիման վրա, ինչպես նաև չի մատնանշել այնպիսի կոնկրետ դատավարական խախտում, նոր ապացույց կամ ապացուցողական գործողություն, որի անհրաժեշտությամբ պայմանավորված՝ գործի վերջնական լուծումը հնարավոր չէր ապահովել իր լիազորությունների շրջանակում: Ընդ որում՝ Վերաքննիչ դատարանն ինքն է արձանագրել, որ դատավարության մասնակիցները նոր ապացույցներ չեն ներկայացրել և չեն միջնորդել կատարել լրացուցիչ ապացուցողական գործողություններ: Ուստի, բողոք բերած անձի համոզմամբ՝ Վերաքննիչ դատարանի կողմից վարույթը նոր դատաքննության փոխանցելը, առանց դրա օբյեկտիվ անհրաժեշտությունը հիմնավորելու, փաստացի մեղադրանքի կողմին լրացուցիչ հնարավորություն է ընձեռում՝ նախկինում չապացուցված հանգամանքները կրկին

ապացուցելու համար, ինչը հակասում է կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքներին:

Բողոքաբերը նշել է նաև, որ իր վերոգրյալ փաստարկումներն արտացոլվել են նաև Վերաքննիչ դատարանի դատավոր Մ.Կիրակոսյանի հատուկ կարծիքում, որում ևս կարևորվել է ապացույցների անբավարարության և վարույթը նոր դատաքննության փոխանցելու անհրաժեշտության տարբերակումը:

7.1. Բողոքաբերն անդրադարձել է նաև քրեական վարույթի տևողությանը՝ ընդգծելով, որ այն շարունակվում է ավելի քան ութ տարի, և այդ պայմաններում նոր ապացույցների ձեռքբերման կամ լրացուցիչ դատավարական գործողությունների իրականացման անհրաժեշտության բացակայության հանգամանքներում վարույթը նոր դատաքննության փոխանցելը հանգեցնելու է դրա հետագա անհարկի ձգձգման՝ չհամապատասխանելով ողջամիտ ժամկետում գործի քննության և ընտրված դատավարական միջոցի համաչափության պահանջներին:

Արդյունքում բողոք բերած անձը եզրահանգել է, որ քրեական վարույթով ձեռք բերված և հետազոտված ապացույցների համակցությունը բավարար չի եղել Դավիթ և Գոռո Համբարձումյանների մեղավորությունը հիմնավոր կասկածից վեր ապացուցելու համար, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանը պետք է կայացներ վերջնական դատական ակտ՝ նրանց արդարացման վերաբերյալ, այլ ոչ թե վարույթը փոխանցեր նոր դատաքննության:

8. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն՝ Դ.Համբարձումյանի և Գ.Համբարձումյանի վերաբերյալ վարույթը նոր դատաքննության փոխանցելու մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2026 թվականի հունիսի 25-ի որոշումը և փոփոխել այն՝ կայացնելով արդարացման դատավճիռ կամ վարույթը փոխանցել նույն դատարան՝ բողոքում արտահայտված դիրքորոշումներին համապատասխան նոր դատական ակտ կայացնելու համար:

III. Մեղադրյալ Դ.Համբարձումյանի պաշտպան Գ.Պապոյանի վճռաբեկ բողոքի փաստարկները և պահանջը.

9. Բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2026 թվականի հունիսի 25-ի որոշումը Դ.Համբարձումյանի մասով օրինական և հիմնավոր չէ, քանի

որ դատարանը պատշաճ գնահատականի չի արժանացրել պաշտպանության կողմի վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները, ինչպես նաև Առաջին ատյանի դատարանի կողմից ապացույցների գնահատման և նյութական իրավունքի կիրառման ընթացքում թույլ տրված խախտումները:

9.1. Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ պաշտպանության կողմը վիճարկել է ոչ միայն ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված որակյալ հատկանիշի, այլև խուլիգանության հիմնական հանցակազմի առկայությունը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, առանց հիմնական հանցակազմի ապացուցվածության վերաբերյալ պատճառաբանված հետևության հանգելու, քննարկման առարկա է դարձրել զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրման հանգամանքը՝ չքննարկելով պաշտպանության կողմի առանցքային փաստարկն այն մասին, որ գործով հետազոտված ապացույցները բավարար չեն վերջինի կողմից խուլիգանություն կատարելու հանգամանքը հաստատված համարելու համար:

9.2. Վերոգրյալի հետ մեկտեղ, շարադրելով և վերլուծելով սույն գործով ձեռք բերված և դատարանում հետազոտված ապացույցները, մասնավորապես՝ տուժողների և վկաների նախաքննական և դատաքննական ցուցմունքները, դեպքի վերաբերյալ տեսագրությունները, դրանք գնահատելով արժանահավատության և բավարարության տեսանկյունից՝ բողոքաբերը նշել է, որ դրանցով չի հաստատվում Դ.Համբարձումյանի կողմից իրեն մեղսագրված խուլիգանական գործողությունների կատարումը: Ավելին՝ բողոքի հեղինակն ընդգծել է, որ դեպքի վայրում գտնված ոստիկանության ծառայողները նույնպես չեն հաստատել Դ.Համբարձումյանի կողմից որևէ անձի հարվածելու, բռնություն գործադրելու, զենք կրելու կամ կիրառելու հանգամանքները, իսկ նրանցից մի քանիսը պարզաբանել են, որ նախաքննության ընթացքում դեպքի որոշ հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ են հայտնել ոչ թե անձնական ընկալման, այլ օպերատիվ տվյալների հիման վրա:

Բողոքաբերն առանձնահատուկ նշանակություն է տվել նաև տուժող ********** **********-ի ներկայացրած՝ 2018 թվականի ապրիլի 22-ի դեպքերն արտացոլող տեսագրությանը՝ գտնելով, որ ստորադաս դատարանները չեն իրականացրել դրա բովանդակության պատշաճ հետազոտություն և գնահատում: Բողոք բերած անձի

կարծիքով՝ նշված տեսագրության բովանդակությունն ուղղակիորեն հաստատում է տուժողների, վկաների, այդ թվում՝ ոստիկանների ցուցմունքներն այն մասին, որ Դավիթ և Գոռ Համբարձումյանները դեպքի ժամանակ որևէ մեկին չեն հարվածել, որևէ մեկի նկատմամբ բռնություն չեն գործադրել, զենք չեն կրել և կիրառել: Բողոքաբերը նշել է նաև, որ տեսագրությամբ պատկերված վիճաբանության ընթացքում առաջին հարվածը հասցրել է տուժող ******* ********-ը, իսկ տեսագրության մեջ լսվող պայթյունի ձայնը ևս չի կարող անվերապահորեն գնահատվել որպես Դ.Համբարձումյանի կողմից արձակված կրակոց, քանի որ դրան հաջորդել է ավտոմեքենայի հետնամասում ծխի առաջացումը, իսկ տուժող ***** **********-ը հայտնել է, որ լսել է ոչ թե հրազենային կրակոց, այլ պայթյուն:

9.3. Բողոք բերած անձի կարծիքով՝ սույն գործով էական նշանակության տեղեկություններ հայտնած անձանց ցուցմունքների արժանահավատությունը գնահատելիս Առաջին ատյանի դատարանն անհիմն նախապատվություն է տվել նրանց նախաքննական ցուցմունքներին՝ պատշաճ չհամադրելով դրանք գործով առկա տեսագրության և մյուս ապացույցների հետ: Մասնավորապես, անձանց դատաքննական ցուցմունքների արժանահավատությունը կասկածի տակ է դրվել նրանց նկատմամբ ենթադրյալ ազդեցության վերաբերյալ օպերատիվ գրության հիման վրա, մինչդեռ հարցաքննված անձինք հերքել են իրենց նկատմամբ որևէ ազդեցություն գործադրվելու հանգամանքը, իսկ հիշյալ գրությունը չէր կարող փոխարինել ապացույցների անմիջական հետազոտման և համադրված գնահատման պահանջին:

Բողոքաբերն ընդգծել է նաև, որ Առաջին ատյանի դատարանը, գնահատելով տուժողներ ********** *********-ի և **** *********-ի ցուցմունքները, թույլ է տվել փաստական անճշտություններ: Մասնավորապես, դատավճռում նշվել է, որ ***** ***********-ը և ********** ***********-ը Դավիթ Համբարձումյանի հետ առերես հարցաքննությունից հետո լրացուցիչ ցուցմունքով պնդել են իրենց սկզբնական ցուցմունքը վերջինիս դեմ, մինչդեռ **.**********-ը և Դ.Համբարձումյանն առերես չեն հարցաքննվել, իսկ **.**********-ն առերես հարցաքննությունից հետո լրացուցիչ ցուցմունքով վերահաստատել է Դավիթ և Գոռ Համբարձումյանների՝ իր նկատմամբ բռնություն գործադրած անձինք չլինելու հանգամանքը:

9.4. Բողոքի հեղինակը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը պատշաճ չի գնահատել նաև տուժողներ **.**********-ի և **.**********-ի ընտանիքի անդամներ ******** *********-ի, ********** **********-ի և ******** *********-ի 2018 թվականի օգոստոսի 14-ին և նույն թվականի օգոստոսի 18-ին տրված նախաքննական ցուցմունքների նշանակությունը, ովքեր հաստատել են, որ տուժողները Դավիթ և Գոռ Համբարձումյանների՝ իրենց նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ տեղեկությունները ստացել են այլ անձանցից: Բողոքաբերի համոզմամբ՝ նման պայմաններում Առաջին ատյանի դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 334-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված լիազորության շրջանակներում, անհրաժեշտության դեպքում պետք է քննարկեր նրանց դատարան հրավիրելու հարցը՝ տուժողների հակասական ցուցմունքները պարզաբանելու նպատակով, այլ ոչ թե առկա հակասությունները մեկնաբաներ ի վնաս մեղադրյալների:

9.5. Բողոքաբերն անդրադարձել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից վարույթը նոր դատաքննության փոխանցելու իրավաչափությանը՝ գտնելով, որ տվյալ դեպքում առկա չեն եղել այնպիսի դատավարական խոչընդոտներ, որոնք կբացառեին գործի վերջնական լուծումը վերաքննության շրջանակներում: Նշվածի համատեքստում բողոքաբերը ներկայացրել է սույն որոշման 7-րդ կետում շարադրված փաստարկներին համանման փաստարկներ՝ ավելացնելով, որ օրենսդրությամբ վերապահված լիազորությունները Վերաքննիչ դատարանին հնարավորություն էին տալիս ստուգելու Առաջին ատյանի դատարանի կողմից ապացույցների գնահատման և նյութական իրավունքի կիրառման ճշտությունը, այդ թվում՝ լուծելու ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով մեղսագրված արարքի՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ գործող քրեական օրենսգիրք) 297-րդ հոդվածին համապատասխանության հարցը, անհրաժեշտության դեպքում փոփոխելու կամ բեկանելու դատավճիռը և կայացնելու նոր դատական ակտ: Պաշտպան Գ.Պապոյանն իր հերթին ևս ընդգծել է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանի լիազորությունների և դատավարական հնարավորությունների անբավարարությունը չի հիմնավորվել, իսկ գործով առկա ապացուցողական նյութը հնարավորություն էր տալիս կայացնելու վերջնական

դատական ակտ՝ ապահովելով դատավարական խնայողության, արդարադատության արդյունավետության, ողջամիտ ժամկետում գործի քննության և դատական շրջապտույտը կանխելու պահանջները:

10. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բավարարել վճռաբեկ բողոքը՝ Դ.Համբարձումյանի մասով փոփոխելով Վերաքննիչ դատարանի՝ 2026 թվականի հունիսի 25-ի որոշումը և կայացնելով արդարացման դատական ակտ կամ բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և վարույթը փոխանցել ստորադաս դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

Վճռաբեկ բողոքի պատասխանը.

11. Մեղադրյալ Դ.Համբարձումյանի պաշտպան Գ.Պապոյանը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ե.Ավագյանի վճռաբեկ բողոքի կապակցությամբ ներկայացված պատասխանում նշել է, որ բողոքը Դ.Համբարձումյանի մեղավորության մասով անհիմն է, հերքվում է պաշտպանության կողմի ներկայացրած բողոքի հիմքերով և հիմնավորումներով, և ենթակա է մերժման:

Միաժամանակ, անդրադառնալով բողոքի՝ Դ.Համբարձումյանի մասով Առաջին ատյանի դատարանի դատավճիռն անփոփոխ թողնելու վերաբերյալ պահանջին՝ պաշտպանը նշել է, որ այն անհիմն է և չի կարող բավարարվել, քանի որ պաշտպանության կողմն Առաջին ատյանի դատարանի դատավճիռը վերաքննության կարգով բողոքարկել էր նաև պատժի մասով՝ գտնելով, որ Առաջին ատյանի դատարանը Դ.Համբարձումյանի նկատմամբ պատիժ նշանակելիս չի պահպանել պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներն ու կանոնները և նշանակել է ակնհայտ խիստ ու անհամաչափ պատիժ, իսկ Վերաքննիչ դատարանն այդ հարցը չի քննարկել և որևէ իրավական գնահատական չի տվել:

Վերոշարադրյալի հիման վրա պաշտպան Գ.Պապոյանը խնդրել է մերժել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ե.Ավագյանի վճռաբեկ բողոքը:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

12. Նախաքննության մարմնի կողմից Դավիթ Միերի Համբարձումյանին, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի կատարման համար, որ. *«/Ն/ա, 2018 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը 16:00-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում, Արարատի մարզի Հայանիստ-Հովտաշատ գյուղերի խաչմերուկի բանուկ հատվածում մի խումբ անձանց հետ դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով և զուգորդվել նույն օրը՝ ժամը 19:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում կայանալիք հանրահավաքին մասնակցելու նպատակով դեպի նշված հրապարակ երթ կազմակերպած մասնակիցների նկատմամբ նախապես իրենց հետ վերցված զենքի և որպես զենք հանդիսացող առարկաների գործադրմամբ բռնություն գործադրելով և գույքը ոչնչացնելով։*

Այսպես.

2018 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը 16:00-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում, Արարատի մարզի Մասիս քաղաքի քաղաքապետ Դավիթ Համբարձումյանը, վերջինիս եղբայր՝ Գոռ Համբարձումյանը, Մասիս քաղաքի բնակիչ Սեյրան Կարապետյանը և քրեական գործով դեռևս ինքնությունը չպարզված այլ անձինք, Արարատի մարզի Հայանիստ-Հովտաշատ գյուղերի խաչմերուկի բանուկ հատվածում, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ, հանրահավաքի մասնակիցների երթը դեպի Երևան քաղաքի Հանրապետության հրապարակ արգելելու, խոչընդոտներ ստեղծելու նպատակով փևական ժամանակ առանց հաշվառման համարանիշերի ավտոմեքենաներով փակել են նշված խաչմերուկից դեպի Երևան քաղաք տանող ճանապարհը, որի ընթացքում Դավիթ Համբարձումյանը, Գոռ Համբարձումյանը, Սեյրան Կարապետյանը և մյուսները, խմբի կազմում միասնական դիտավորությամբ, մեկը մյուսի գործողություններն գիտակցելով և փոխլրացնելով, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ, հայհոյանքներ են հնչեցրել հանրահավաքի մասնակիցների հասցեին, նրանց տեղաշարժը կանխելու նպատակով բռնություն են գործադրել՝ ոտքերով, ձեռքերով և

*որպես զենք օգտագործվող, նախապես իրենց հետ վերցրած մահակներով և քարերով հարվածներ են հասցրել երթի մասնակիցներին, այդ ընթացքում Դավիթ Համբարձումյանը գոտկատեղի հատվածում կրել է զենքին նմանվող առարկա՝ հասարակության անդամների մոտ ստեղծելով վախի և սարսափի մթնոլորտ և խմբի կազմում, այդ թվում՝ [Գոռ] Համբարձումյանի հետ, բռունցքներով և ոտքերով հարվածներ են հասցրել ցույցի մասնակիցներ ****** *******-ի և ********** **********-ի մարմնի տարբեր մասերին՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով: Այդ ամենի ընթացքում խմբի՝ ինքնությունը չպարզված մյուս անդամները մահակներով, ավտոմեքենայի խլացուցիչով և այլ առարկաներով, ինչպես նաև ձեռքերով նույնպես զուգահեռ հարվածներ են հասցրել ***** ********-ին, ********** ********-ին, ******** **********-ին և խաղաղ երթի այլ մասնակիցներին: Միջադեպի ընթացքում Դավիթ Համբարձումյանը գործով չպարզված արտաասահմանյան մակնիշի, սև գույնի ավտոմեքենայի սրահից որպես զենք օգտագործվող, քննությամբ չպարզված առարկայի գործադրմամբ կրակ է արձակել խաղաղ երթի մասնակիցների ուղղությամբ, որի հետևանքով վտանգվել է հասարակական անվտանգությունը՝ միաժամանակ հասարակության անդամների մոտ ստեղծելով վախի և սարսափի մթնոլորտ: Հանցավոր խմբի մյուս անդամ՝ Սեյրան Կարապետյանի կողմից հրազենի գործադրման հետևանքով ******* ********** **********-ին պատճառվել է աջ սրունքի միջին երրորդականի միջանցիկ հրազենային վնասվածք՝ նրա առողջությանը պատճառելով միջին ծանրության վնաս: Նույն միջադեպի ժամանակ Գ.Համբարձումյանը ձեռքով հարվածել է **.***********-ին՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք, որն արտահայտվել է աջ աչքի ստորին կոպի արյունազեղման ձևով, որից հետո ոտքով հարվածել է վերջինիս կողմից վարվող «Նիսան» մակնիշի ** ** *** համարանիշի ավտոմեքենային՝ **.**********-ին պատճառելով 33.000 ՀՀ դրամի գույքային վնաս: Հանցավոր խմբի վերոհիշյալ համատեղ գործողությունների արդյունքում վնասվել են Արարատի մարզի Հայանիստ համայնքին պատկանող, ********** **********-ի կողմից վարվող «CHEVROLET AVEO 1,2» մակնիշի *** ** ** հաշվառման համարանիշի, ******

***********-ին պատկանող «Վազ 2107» մակնիշի ** ** ***** հաշվառման համարանիշի ավտոմեքենաները՝ Հայանիստ համայնքին պատճառելով 110.000, իսկ **.**********-ին՝ 14.000 ՀՀ դրամի գույքային վնաս»*[1]:

12.1. Գոո Միերի Համբարձումյանին, ի թիվս այլնի, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի կատարման համար որ. *«[Ն]ա, 2018 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը 16:00-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում, Արարատի մարզի Հայանիստ-Հովտաշատ գյուղերի խաչմերուկի բանուկ հատվածում մի խումբ անձանց հետ դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով և զուգորդվել նույն օրը՝ ժամը 19:00-ի սահմաններում Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում կայանալիք հանրահավաքին մասնակցելու նպատակով դեպի նշված հրապարակ երթ կազմակերպած մասնակիցների նկատմամբ նախապես իրենց հետ վերցված զենքի և որպես զենք հանդիսացող առարկաների գործադրմամբ բռնություն գործադրելով և գույքը ոչնչացնելով:*

Այսպես.

2018 թվականի ապրիլի 22-ին ժամը 16:00-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում Գոո Համբարձումյանը, վերջինիս եղբայր՝ Արարատի մարզի Մասիս քաղաքի քաղաքապետ Դավիթ Համբարձումյանը, Մասիս քաղաքի բնակիչ Սեյրան Կարապետյանը և քրեական գործով դեռևս ինքնությունը չպարզված այլ անձինք, Արարատի մարզի Հայանիստ-Հովտաշատ գյուղերի խաչմերուկի բանուկ հատվածում, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ, հանրահավաքի մասնակիցների երթը դեպի Երևան քաղաքի Հանրապետության հրապարակ արգելելու, խոչընդոտներ ստեղծելու նպատակով փևական ժամանակ առանց հաշվառման համարանիշերի ավտոմեքենաներով փակել են նշված խաչմերուկից դեպի Երևան քաղաք տանող ճանապարհը, որի ընթացքում Դավիթ Համբարձումյանը, Գոո Համբարձումյանը, Սեյրան Կարապետյանը և մյուսները, խմբի կազմում միասնական դիտավորությամբ, մեկը մյուսի գործողությունները գիտակցելով և փոխլրացնելով, բացահայտ

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 22-րդ, թերթեր 247-252:

*անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ, հայհոյանքներ են հնչեցրել հանրահավաքի մասնակիցների հասցեին, նրանց տեղաշարժը կանխելու նպատակով բռնություն են գործադրել՝ ոտքերով, ձեռքերով և որպես զենք օգտագործվող, նախապես իրենց հետ վերցրած մահակներով և քարերով հարվածներ են հասցրել երթի մասնակիցներին, այդ ընթացքում Դավիթ Համբարձումյանը գուրկատեղի հարվածում կրել է զենքին նմանվող առարկա՝ հասարակության անդամների մոտ ստեղծելով վախի և սարսափի մթնոլորտ և իմբի կազմում, այդ թվում Դավիթ Համբարձումյանի հետ բռունցքներով և ոտքերով հարվածներ է հասցրել ցույցի մասնակիցներ ***** *********-ի և ********** **********-ի մարմնի տարբեր մասերին՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով: Այդ ամենի ընթացքում ինքնությունը չպարզված իմբի մյուս անդամները մահակներով, ավտոմեքենայի խլացուցիչով և այլ առարկաներով, ինչպես նաև ձեռքերով նույնպես զուգահեռ հարվածներ են հասցրել ***** ********-ին, ********* ********-ին, ******* ********-ին և խաղաղ երթի այլ մասնակիցներին: Միջադեպի ընթացքում Դավիթ Համբարձումյանը գործով չպարզված սև գույնի արտաասահմանյան մակնիշի ավտոմեքենայի սրահից որպես զենք օգտագործվող, քննությամբ չպարզված առարկայի գործադրմամբ կրակ է արձակել խաղաղ երթի մասնակիցների ուղղությամբ, որի հետևանքով վտանգվել է հասարակական անվտանգությունը՝ միաժամանակ հասարակության անդամների մոտ ստեղծելով վախի և սարսափի մթնոլորտ: Հանցավոր իմբի մյուս անդամ՝ Սեյրան Կարապետյանի կողմից հրազենի գործադրման հետևանքով ******** ******** **********-ին պատճառվել է աջ սրունքի միջին երրորդականի միջանցիկ հրազենային վնասվածք՝ նրա առողջությանը պատճառելով միջին ծանրության վնաս: Նույն միջադեպի ժամանակ Գ.Համբարձումյանը ձեռքով հարվածել է **.**********-ին՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք, որն արտահայտվել է աջ աչքի ստորին կոպի արյունազեղման ձևով, որից հետո ոտքով հարվածել է վերջինիս կողմից վարվող «Նիսան» մակնիշի «** ** ***» համարանիշի ավտոմեքենային՝ **.*********-ին պատճառելով 33.000 ՀՀ դրամի նյութական վնաս: Հանցավոր իմբի վերոհիշյալ*

*համապատեղ գործողությունների արդյունքում վնասվել են Արարատի մարզի Հայանիստ համայնքին պատկանող, ******* *********-ի կողմից վարվող «CHEVROLET AVEO1,2» մակնիշի *** ** ** հաշվառման համարանիշի, ****** *********-ին պատկանող «Վազ 2107» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենաները՝ Հայանիստ համայնքին պատճառելով 110.000 ՀՀ դրամի գույքային վնաս, իսկ **.*******-ին՝ 14.000 ՀՀ դրամի գույքային վնաս»*[2]:

12.2. Արմեն Ռաֆիկի Մամուլյանին, Կարեն Կարապետի Օհանյանին, Արմենակ Մելսիկի Հակոբյանին, Գոռ Լևոնի Խաչատրյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի կատարման համար, որ. *«[Նրանք], 22.04.2018թ. Երևան քաղաքի Էրեբունի և Նոր Արեշ 26 փողոցների հատման վայրում (...) քննությամբ դեռևս չպարզված մի խումբ անձանց հետ մասնակցել [են] անհայտ անձի կողմից կազմակերպած զանգվածային անկարգություններին, որոնք զուգորդվել են բռնությամբ և ջարդերով և գույքի ոչնչացմամբ:*

Այսպես.

2018 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը 13.00-ի սահմաններում, մի խումբ քաղաքացիներ խաղաղ երթ են կազմակերպել Երևան քաղաքի «Էրեբունի թանգարանի» հարակից տարածքից և շարժվել են Էրեբունի փողոցով դեպի Երևան քաղաքի Արցախի պողոտան:

Նույն օրը Արմենակ Հակոբյանը, Արմեն Մամուլյան[ը], Կարեն Օհանյան[ը], Գոռ Խաչատրյան[ը] և քննությամբ դեռևս չպարզված անձ[ինք] (...) նախնական համաձայնություն [են] ձեռք բերել հասարակության անդամների, այդ թվում՝ խաղաղ ցույցի մասնակիցների անվտանգությունը վտանգի տակ դնելու նպատակով անհայտ անձի կողմից կազմակերպված զանգվածային անկարգությունների ընթացքում հասարակության անդամների՝ խաղաղ ցույցի մասնակիցների նկատմամբ բռնություն գործադրելու, ջարդեր իրականացնելու վերաբերյալ:

Պլանավորած հանցագործության իրականացման համար հանցավոր խումբը ձեռք է բերել մահակներ, էլեկտրահարող սարքեր, իսկ զանգվածային անկարգությունների մասնակիցների ինքնությունը հետագայում չբացահայտվելու

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 19-րդ, թերթեր 237-241:

*նպատակով վերջիններս ձեռք են բերել և հետագայում օգտագործել բժշկական դիմակներ, որից հետո Գ.Խաչատրյանը, Կ.Օհանյանը, Ա.Հակոբյանը, Ա.Մամուլյանը և ինքնությունը չպարզված անձինք, խմբի կազմում միասնական դիտավորությամբ, մեկը մյուսի գործողությունները գիտակցելով և փոխլրացնելով, քննությամբ դեռևս չպարզված անձի կողմից Երևան քաղաքի Էրեբունի և Նոր Արեշ 26 փողոցների հատման վայրում կազմակերպված զանգվածային անկարգությունների ընթացքում սեռական բնույթի հայհոյանքներ տալով, վիրավորանքներ և սպառնալիքներ հնչեցնելով, խաղաղ ցույցի մասնակիցների նկատմամբ, բռնություն են գործադրել և ջարդեր են իրականացրել, մասնավորապես՝ քարեր են նետել խաղաղ երթի մասնակիցների ուղղությամբ, որից հետո հարձակվելով նրանց վրա՝ տարբեր առարկաներով, մահակներով, քարերով, ոտքերով և ձեռքերով հարվածներ են հասցրել և էլեկտրահարող սարքերով էլեկտրահարել են երթի մասնակիցներին: Այդ ընթացքում Գոռ Խաչատրյանը բռունցքով մեկ անգամ հարվածել է ******* **********-ի գլխի շրջանին, ում հրել և գլխին մեկ անգամ հարվածել է Կարեն Օհանյանը, ուսի հատվածից ձախ ձեռքով քաշել և աջ ձեռքով հարվածել Արմեն Մամուլյանը, ինչպես նաև Արմենակ Հակոբյանը և ինքնությունը չպարզված անձինք նույնպես բազմաթիվ հարվածներ են հասցրել **.**********-ի մարմնի տարբեր մասերին՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթև վնասի հատկանիշներ պարունակող և չպարունակող մարմնական վնասվածքներ: Հանցավոր խմբի վերոհիշյալ համատեղ գործողությունների արդյունքում առողջությանը թեթև վնասի հատկանիշներ պարունակող և չպարունակող մարմնական վնասվածքներ են ստացել երթի մասնակիցներ ******** **********-ը, ******* **********-ը պատահական անցորդ ******* *********-ը և քննությամբ դեռևս չպարզված անձինք, ինչպես նաև ցույցի ընթացքը լուսաբանող լրագրող՝ ****** *********-ը և օպերատոր ********** **********-ը, որի հետևանքով վտանգվել է հասարակական անվտանգությունը՝ միաժամանակ հասարակության անդամների մոտ ստեղծելով վախի և սարսափի մթնոլորտ: Միջադեպի ընթացքում հանցավոր խմբի գործողությունների արդյունքում վնասվել է ********* **********-ի կողմից*

*շահագործվող «Վազ 21074» մակնիշի ** ** *** համարանիշի ավտոմեքենան՝ **.**********-ին պատճառելով 140.000 ՀՀ դրամի գույքային վնաս: (...)»*[3]:

13. Առաջին ատյանի դատարանն Արմեն Մամուլյանին, Կարեն Օհանյանին, Արմենակ Հակոբյանին և Գոռ Խաչատրյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով արդարացնելիս արձանագրել է հետևյալը. *«(...) Համաձայն մեղադրական եզրակացության՝ մեղադրյալներ Արմեն Մամուլյանին, Կարեն Օհանյանին, Արմենակ Հակոբյանին և Գոռ Խաչատրյանին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով ներկայացված մեղադրանքի հիմքում դրված ուղղակի ապացույցներն են՝ որպես այլ փաստաթուղթ ապացույցներ ճանաչված համացանցի «յութուբ» կայքից ներբեռնված «Էրեբունիում դիմակավորված անձինք հարձակվեցին և ծեծեցին ցուցարարներին» և «Ինչպես է դիմակավորված խուժանը հարձակվում խաղաղ ցուցարարների վրա» վերտառություններով տեսանյութերը, «aravot.am» կայքում 22.04.2018թ. Էրեբունի և Նոր Արեշ փողոցների խաչմերուկում տեղի ունեցած զանգվածային անկարգություններին մասնակցող անձանց ինքնության վերաբերյալ տեսանյութը, համացանցի «յութուբ» կայքից ներբեռնված «Էրեբունիում անհայտ անձինք մահակներով բռնություն են կիրառում քաղաքացիների նկատմամբ» վերտառությամբ տեսանյութը, համացանցի «յութուբ» կայքից ներբեռնված «Էրեբունի համայնք հարձակում քաղաքացիների վրա» վերտառությամբ տեսանյութը, Արմենակ Հակոբյանի՝ ***-**-**-** բջջային հեռախոսահամարի վերծանումները, Գոռ Խաչատրյանի՝ ***-**-**-** բջջային հեռախոսահամարի վերծանումները, 30.05.2018թ. պուժող ****** **********-ի մասնակցությամբ «Էրեբունիում անհայտ անձինք մահակներով բռնություն են կիրառում քաղաքացիների նկատմամբ» տեսանյութը զննելու մասին արձանագրությունը, 30.05.2018թ. վկա ******* **********-ի մասնակցությամբ «Էրեբունիում անհայտ անձինք մահակներով բռնություն են կիրառում քաղաքացիների նկատմամբ», «Էրեբունի համայնք՝ հարձակում քաղաքացիների վրա» և «Էրեբունիում դիմակավորված անձինք հարձակվեցին և ծեծեցին ցուցարարներին» տեսանյութերը զննելու մասին արձանագրությունը, 31.05.2018թ. վկա ******* **********-ի*

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 23-րդ, թերթեր 28-32, 42-46, 57-62, 74-78:

*մասնակցությամբ «Էրեբունիում անհայտ անձինք մահակներով բռնություն են կիրառում քաղաքացիների նկատմամբ», «Էրեբունի համայնք՝ հարձակում քաղաքացիների վրա» և «Էրեբունիում դիմակավորված անձինք հարձակվեցին և ծեծեցին ցուցարարներին» փեսանյութերը զննելու մասին արձանագրությունը, 11.07.2018թ. վկա ******** **********-ի մասնակցությամբ փեսանյութերը զննելու մասին արձանագրությունը, դատաբժշկական փորձաքննության փորձագեւրի թիվ 1231/հ եզրակացությունը, դատաբժշկական փորձաքննության փորձագեւրի թիվ 0796 եզրակացությունը, դատաբժշկական փորձաքննության փորձագեւրի թիվ 0766 եզրակացությունը, դատաբժշկական փորձաքննության փորձագեւրի թիվ 0831 եզրակացությունը, դատաբժշկական փորձաքննության փորձագեւրի թիվ 0047/հ եզրակացությունը, ինչպես նաև տուժողներ՝ ******* **********-ի, ******* ********-ի, ********* *********-ի, ******** ***********-ի, ******** ***********-ի, ******** ***********-ի, ********** **********-ի, ******** ***********-ի, ****** **********-ի, ****** **********-ի, ********** **********-ի, ********** **********-ի, ******* ***********-ի, ******* **********-ի, ********** **********-ի, ****** **********-ի, ********** *********-ի, ********** **********-ի, ****** **********-ի ցուցմունքները։*

Դատարանը գտնում է, որ վերոնշյալ ապացույցները չեն կարող դրվել մեղադրյալներ Արմեն Մամուլյանին, Կարեն Օհանյանին, Արմենակ Հակոբյանին և Գոո Խաչատրյանին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով ներկայացված մեղադրանքի հիմքում, քանի որ դրանցով չեն հաստատվում մեղադրյալներին առաջադրված մեղադրանքները։

*Մասնավորապես՝ Արմեն Մամուլյանին առաջադրված մեղադրանքի հիմքում դրված կոնկրետ ապացույցներից է վկա ******* **********-ի ցուցմունք[ը], որով վերջինս հայտնել է, որ դիտելով «Էրեբունիում անհայտ անձինք մահակներով բռնություն են կիրառում քաղաքացիների նկատմամբ», «Էրեբունի համայնք՝ հարձակում քաղաքացիների վրա» և «Էրեբունիում դիմակավորված անձինք հարձակվեցին և ծեծեցին ցուցարարներին» փեսանյութերը ճանաչել է փեսանյութերի տարբեր հատվածներում երևացող Արմեն Մամուլյանին, քանի որ*

*վերջինս հանդիսացել է Էրեբունի վարչական շրջանի կոմունալ բաժնի պետ: Միաժամանակ վկա ********* **********-ը դատարանում ցուցմունք տալիս հայտնել է, որ տեսանյութում տեսել է քաշքշուկ և չգիտի Արմեն Մամուլյանը բաժանում էր այդ մարդկանց, թե մասնակցում էր դրան: Մինչդեռ Արմեն Մամուլյանը դատարանում ցուցմունք տալիս հայտնել է, որ 2018 թվականի ապրիլի 22-ին ինքը աշխատել է Էրեբունի վարչական շրջանում, որպես կոմունալ բաժնի պետ, մինչդ այդ օրերը, երբ տեղի են ունեցել ցույցեր, փակվել են փողոցներ, մարդիկ փչացրել են համայնքի գույքը, ինչի պատճառով ինքը իր 16.04.2018թ. զեկուցագրով խնդրել է թաղապետից միջոցներ ձեռնարկել համայնքի գույքը չփչացնելու համար, որին ի պատասխան ստացվել է գրություն համաձայն որի՝ կարգադրվել է սահմանել խիստ հսկողություն համայնքի գույքը պահպանելու նպատակով: Իրեն աշխատանքային պարտականությունները կատարելու նպատակով ինքը և իր աշխատակազմը այդ ամբողջ ընթացքում մշտապես եղել են փողոցներում, դեպքի օրը ևս եղել են ցուցարարների հետ, որպեսզի բացառեն համայնքի գույքի վնասումը: Ամբողջ ցույցի ընթացքում իրենք քայլել են ժողովրդի հետ և երբ հասել են Էրեբունի փողոց մարդիկ սկսել են բաժանվել, ինքը որոշել է ջուր խմել, քանի որ շաքարային դիաբետ ունի և մտածել են մի կես ժամ էլ սպասեն ու ցուցարարները կցրվեն, այդ ժամանակ խառնաշփոթ է սկսվել և տեսել է, որ մի երիտասարդ փորձել է անընդհատ հրահրել ցուցարարներին և մի պահ այդ երիտասարդը քայլել է դեպի իրեն՝ հայհոյանքներ տալով, ինքը այդ պահին մի ձեռքի շարժում է արել և ասել վերջինիս, որ գնա այդտեղից: Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Արմեն Մամուլյանի մասնակցությամբ տեսանյութի ուսումնասիրությունից ևս պարզ երևում է, որ վերջինս ձեռքի մի շարժում է կատարում ուղղված ******* ********-ը, սակայն այդ շարժումը չի էլ դիպչում վերջինիս: Հարկ է արձանագրել նաև, որ տեսանյութերի զննությունից երևում է, որ Արմեն Մամուլյանը չի եղել դիմակավորված կամ որևէ կերպ քողարկված, ուստի Դատարանը գտնում է, որ Ա.Մամուլյանի ցուցմունքը, այն մասին, որ վերջինս դեպքի վայրում է եղել իր աշխատանքային պարտականությունները կատարելու նպատակով արժանահավատ են և հաստատվում են քրեական գործով ձեռք բերված վերաբերելի և թույլատրելի ապացույցներով: Ինչ վերաբերվում է մնացած փուժողների և վկաների*

ցուցմունքներին, ապա նրանցից և ոչ որ չի հայտնել տեղեկություն այն մասին, որ դեպքի օրը տեսել է Արմեն Մամուլյանին:

*Անդրադառնալով Կարեն Օհանյանին, Արմենակ Հակոբյանին և Գոո Խաչատրյանին Դատարանը արձանագրում է, որ վերջիններիս մեղադրանքի հիմքում դրվել է վկա ******* **********-ի նախաքննական ցուցմունքը, որով վերջինս հայտնել է, որ 22.04.2018թ. Էրեբունի և Նոր Արեշ 26 փողոցների խաչմերուկում տեղի ունեցած դեպքի տեսագրությունները դիտելիս դիմակավորված անձանց շարքում տեսել և ճանաչել է Մասիս քաղաքի քաղաքապետ Դավիթ Համբարձումյանի տեղակալ Կարեն Օհանյանին, «Ջիբիլի Գոոիկ» մականվամբ Գոո Խաչատրյանին, Մասիս քաղաքի սպորտդպրոցի տնօրեն Արմենակ Հակոբյանին, Մասիս քաղաքի բնակիչ «Գյաջ Նվեր» մականվամբ անձին:*

*Դատարանը արձանագրում է, որ Կարեն Օհանյանի, Արմենակ Հակոբյանի և Գոո Խաչատրյանի մեղադրանքի հիմքում դրված է նաև 2018 թվականի մայիսի 31-ին կազմված վկա ******* *********-ի մասնակցությամբ «Էրեբունիում անհայտ անձինք մահակներով բռնություն են կիրառում քաղաքացիների նկատմամբ», «Էրեբունի համայնք՝ հարձակում քաղաքացիների վրա» և «Էրեբունիում դիմակավորված անձինք հարձակվեցին և ծեծեցին ցուցարարներին» տեսանյութերը զննելու մասին արձանագրությունը, որի համաձայն՝ մասնակից **.**********-ը տեսանյութերը դիտելիս հանցավոր խմբի անդամներից ճանաչել է Մասիս քաղաքի քաղաքապետ Դավիթ Համբարձումյանին, վերջինիս հորեղբոր որդուն, Մասիս քաղաքի փոխքաղաքապետ Կարեն Օհանյանին, Արմենակ Հակոբյանին, «Ջիբիլի Գոոիկ» մականվամբ Գոո Խաչատրյանին:*

Այս համատեքստում հարկ է արձանագրել, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից 2019 թվականի հունվարի 18-ին որոշում է կայացվել Դավիթ Միերի Համբարձումյանին որպես մեղադրյալ ներգրավելու և վերջինիս 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք առաջադրելու մասին, սակայն 2019 թվականի մայիսի 22-ին կրկին վարույթն իրականացնող մարմնի կողմից որոշում է կայացվել Դավիթ Միերի Համբարձումյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով

առաջադրված մեղադրանքը վերացնելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Վերոնշյալ որոշմամբ արձանագրվել է, որ (...) քրեական գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանցում, այդ թվում՝ դեպքի վերաբերյալ տեսանյութերում առկա չեն Դավիթ Համբարձումյանի, Գևորգ Համբարձումյանի, Սարգիս Սահակյանի և Արթուր Խանջյանի կողմից 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասի դիսպոզիցիայով նկարագրված արարքներից որևէ մեկը կատարելու վերաբերյալ փաստական տվյալներ: Այդ մասին տվյալներ առկա չեն նաև գործով ձեռք բերված այլ ապացույցներում: (...)

*Վերը մեջբերվածի հաշվառմամբ Դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացրած մարմինը քրեական գործի նախաքննության ընթացքում ստացված ապացույցները՝ (վկա ******** **********-ի ցուցմունքը և զննության արձանագրությունը) մի մեղադրյալի մասով դիտել է ոչ բավարար մեղադրյալին առաջադրված մեղադրանքը հիմնավորելու հարցում, մյուս մեղադրյալների մասով դիտել է բավարար և նշված ապացույցների զանգվածով գործն ուղարկել է դատարան: Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ Կարեն Օհանյանի, Արմենակ Հակոբյանի և Գոռ Խաչատրյանի նկատմամբ նույն ապացույցների զանգվածի պայմաններում քրեական հետապնդումը շարունակելը ողջամիտ չէ, քանի որ վարույթն իրականացնող քննիչը իր որոշմամբ հստակ արձանագրել է, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասի դիսպոզիցիայով նկարագրված արարքներից որևէ մեկը կատարելու, դեպքին առնչություն, մեղավորություն ունենալու վերաբերյալ գործին վերաբերող փոխկապակցված հավաստի փաստական տվյալների բավարար ամբողջություն ձեռք չի բերվել: Ինչ վերաբերվում է սույն դրվագով ******** **********-ի մասնակցությամբ տեսանյութի զննության ընթացքում վերջինիս կողմից արված հայտարարությանը՝ մասնավորապես, տեսանյութում որոշակի անձանց ճանաչելու վերաբերյալ, ապա Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն դրվագով դատաքննության ընթացքում հետազոտված որևէ տեսանյութում՝ բացի Արմեն Մամուլյանից, այլ մեղադրյալի ակնադիտական տեսանկյունից նայելով օբյեկտիվորեն հնարավոր չի նույնականացնել, քանի որ հանցանք կատարելիս*

*հիշյալ բոլոր անձինք եղել են քողարկված՝ դիմակներով, գլխարկներով և հիշյալ տեսանյութերում՝ անձին նույնականացնելու համար որևէ օբյեկտիվ հատկանիշ չի նշմարվում: Հիշյալ ապացույցների արժանահավատության հարցը քննարկելիս հատկանշական է այն հանգամանքը, որ քրեական գործի նախաքննության ընթացքում սույն դրվագի վերաբերյալ ստացված տեսանյութերում պատկերված անձինք առաջին անգամ «նույնականացվել են» մեղադրյալների հետ aravot.am լրատվական կայքի կողմից և հիշյալ հրապարակումը լրատվական միջոցում հայտնվելուց հետո օրաթերթի կողմից նույնականացված անձանց «ճանաչել են» նաև ******* **********-ը և ******** **********-ը: Հարկ է արձանագրել նաև, որ հիշյալ տեսանյութերում՝ aravot.am լրատվական կայքի կողմից ի թիվս այլ անձանց «նույնականացվել է» նաև սույն քրեական գործով մեկ այլ դրվագով մեղադրյալ Դավիթ Համբարձումյանը: Այս համատեքստում հարկ է արձանագրել, որ հիշյալ երկու անձինք քրեական գործում վկայի դատավարական կարգավիճակ են ստացել հետաքննության մարմնի «անմիջական միջամտության արդյունքում», մասնավորապես՝ 2018 թվականի հունիսի 4-ին վարույթն իրականացրած քննիչի կողմից ՀՀ ոստիկանության բաժնին տրվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու մասին հանձնարարություն՝ տեսագրությունում երևացող հանցանք կատարած անձանց ճանաչող անձ ներկայացնելու կապակցությամբ և հանձնարարությանն ի պատասխան ստացվել է գրություն այն մասին, որ տեսագրությունում երևացող հանցանք կատարած անձանց հնարավոր է ճանաչեն՝ Մասիս քաղաքի բնակիչներ ******* *********-ը և ****** ******** ********-ը: Նման պայմաններում վկա ******* **********-ի նախաքննական ցուցմունքի, վերջինիս և ******* **********-ի մասնակցությամբ կատարված զննության ընթացքում հայտնած տեղեկությունների վերաբերյալ ստացված փվյալները Դատարանը դիտարկում է ոչ արժանահավատ, դրանք այլ օբյեկտիվ ապացույցներով ստուգելու հնարավորություն Դատարանը չի ունեցել, քանի որ մեղադրանքի կողմից չի ներկայացվել այլ ողջամիտ գնահատելի ապացույց, որով հնարավոր կլիներ արձանագրել հիշյալ անձանց կողմից հայտնած տեղեկության օբյեկտիվ իսկության առկայությունը:*

Հարկ է նշել, որ մեղադրանքի կողմի ներկայացրած մյուս ապացույցներում, առկա չէ Արմեն Մամուլյանի, Կարեն Օհանյանի, Արմենակ Հակոբյանի և Գոռ Խաչատրյանի կողմից մի խումբ անձանց հետ անհայտ անձի կողմից կազմակերպած՝ բռնությամբ, ջարդերով և գույքի ոչնչացմամբ զուգորդված, զանգվածային անկարգություններին մասնակցելու հանգամանքը հավաստող որևէ օբյեկտիվ փվյալ։

Մեղադրյալներ Արմեն Մամուլյանի, Կարեն Օհանյանի, Արմենակ Հակոբյանի և Գոռ Խաչատրյանի թե՛ նախաքննության, թե՛ դատաքննության ընթացքում ներկայացված մեղադրանքում իրենց մեղավոր չեն ճանաչել և հերքել են մի խումբ անձանց հետ անհայտ անձի կողմից կազմակերպած՝ բռնությամբ, ջարդերով և գույքի ոչնչացմամբ զուգորդված, զանգվածային անկարգություններին մասնակցելու հանգամանքը։

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ Արմեն Մամուլյանի, Կարեն Օհանյանի, Արմենակ Հակոբյանի և Գոռ Խաչատրյանի կողմից՝ մի խումբ անձանց հետ անհայտ անձի կողմից կազմակերպած՝ բռնությամբ, ջարդերով և գույքի ոչնչացմամբ զուգորդված, զանգվածային անկարգություններին մասնակցելու հանգամանքը, չի հաստատվում գործում առկա և դատարանում օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի հետազոտված փոխկապակցված թույլատրելի, վերաբերելի և հավաստի ապացույցների բավարար համակցությամբ։ Այլ կերպ ասած՝ Արմեն Մամուլյանի, Կարեն Օհանյանի, Արմենակ Հակոբյանի և Գոռ Խաչատրյանի կողմից մի խումբ անձանց հետ անհայտ անձի կողմից կազմակերպած՝ բռնությամբ, ջարդերով և գույքի ոչնչացմամբ զուգորդված, զանգվածային անկարգություններին մասնակցելու վերաբերյալ առկա են ողջամիտ կասկածներ, որոնք (…) պետք է մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալների՝ Արմեն Մամուլյանի, Կարեն Օհանյանի, Արմենակ Հակոբյանի և Գոռ Խաչատրյանի։ (…)»[4]։

13.1. Առաջին ատյանի դատարանում Դավիթ Համբարձումյանին և Գոռ Համբարձումյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքների շրջանակում, ի թիվս այլնի, հետազոտվել են նաև հետևյալ ապացույցները.

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 38-րդ, թերթեր 92-99։

- Մեղադրյալ *Դավիթ Համբարձումյանի* դատաքննական ցուցմունքն այն մասին, որ 2018 թվականի ապրիլի 22-ին, երբ ինքը գտնվել է Հայանիստի խաչմերուկում, կրակոց և զինված մարդկանց չի տեսել, տեսել է միայն ոստիկանության աշխատակիցներին, ովքեր բաժանում էին կողմերին: **Ինքն այնտեղ գտնվել է մոտ կես ժամ:** Եղբայրն այնտեղ չի եղել, իսկ այն խոսակցությունները, որ ինքը թիկնապահների հետ գնացել, ցուցարարներին ծեծի է ենթարկել, իրականությանը չի համապատասխանում, ինքը երբեք թիկնապահներ, զենք չի ունեցել, իր անվամբ գրանցված զենք ևս չունի:

- Մեղադրյալ *Գոռ Համբարձումյանի* տարբեր դատավարական կարգավիճակներում տված նախաքննական ցուցմունքներն այն մասին, որ դեպքի հետ որևէ կապ չունի, ինքն այդ օրը նշված խաչմերուկում չի գտնվել ու որևէ վիճաբանության չի մասնակցել:

- Տուժող ******* **********-*ի* 2018 թվականի մայիսի 8-ի նախաքննական լրացուցիչ ցուցմունքն այն մասին, որ նախկինում իրականությունը չի հայտնել, քանի որ վախեցել է Մասիսի քաղաքապետ Դ.Համբարձումյանից, նրա եղբորից ու նրա շրջապատի անձանցից, սակայն հաշվի առնելով երկրում փոխված իրավիճակը, հայտնել է իրականությունն այն մասին, որ 2018 թվականի ապրիլի 22-ին մի խումբ ցուցարարների հետ որոշել է մասնակցել այդ օրը Հանրապետության հրապարակում անցկացվելիք հանրահավաքին: Ժամը 16:20-ի սահմաններում, երբ երթի մասնակիցների հետ հասել է Հայանիստ-Հովտաշատ գյուղերի խաչմերուկ, նկատել է, որ մոտ 10-15 հոգի, որոնցից միայն 4-5 հոգին էին դիմակավորված, 4-5 ավտոմեքենաներով փակել էին ճանապարհը և ժողովրդին արգելում էին գնալ Երևան: Ճանապարհը փակել էին անձամբ քաղաքապետ Դ.Համբարձումյանը, նրա եղբայր Գ.Համբարձումյանը և նրանց կողմնակիցները: Տեսնելով, որ երթին մասնակցող երեխաներին այս ու այն կողմ են շպրտում և հայհոյանքներ տալիս, մոտեցել է նրանց և հարցրել, թե ինչու են այդպես վարվում, Դ.Համբարձումյանն իրեն հայհոյանքով է պատասխանել և բռունցքով շատ ուժեղ հարվածել գլխին, որից հետո նրա կողքին կանգնածները, այդ թվում՝ եղբայրը, նույնպես հարձակվել են: Չորս հոգով հարվածներ են հասցրել իր գլխին և մարմնի տարբեր մասերին, հիմնականում ոտքերով, նաև գլխին՝ ինչ որ առարկայով, որից հետո նրանք, քարեր ու փայտեր են

օգտագործել, հարվածել են նաև մյուս ցուցարարներին, ովքեր հետ քաշվելով նույնպես քարեր և փայտեր են նետել: Այդ ընթացքում իր եղբայրը՝ *****, փորձել է միջամտել, որի արդյունքում նույն անձինք, իրեն թողնելով, հարձակվել են եղբոր վրա, հարվածել ոտքերով, ձեռքերով և, այդ ընթացքում, երբ ցուցարարներն սկսել են քարեր շպրտել նրանց ուղղությամբ, նրանք հետ են քաշվել: Այդ ժամանակ տեսել է նաև, որ առանց համարանիշի սև գույնի «Յաշիկ-բոաբուս» մակնիշի ավտոմեքենան կանգնել է խաչմերուկի մեջտեղը, վարորդի կողքի **հատվածից իջել է սև հագուստներով, դիմակավորված, սև կլոր առաջ եկած կողքերով գլխարկով և ակնոցով անձ, ով իրենց ուղղությամբ կրակել է 3-4 անգամ, ապա ևս 3-ը՝ օդ, այդ ընթացքում լսվել են նաև կրակոցի այլ ձայներ, պայթյունի գմփոց:** Այդ կրակոցներից հետո ցուցարարները կրկին քարեր են նետել նրանց ուղղությամբ. ստեղծվել էր հետևյալ վիճակը՝ ցուցարարները գտնվում էին խաչմերուկից դեպի Հովտաշեն գյուղ տանող ճանապարհին, քաղաքապետն իր կողմնակիցներով՝ խաչմերուկից Արգավանդ գյուղ տանող ճանապարհին: Իսկ դեպքի վայրում գտնվող ոստիկանները, կաշկանդված լինելով քաղաքապետից, ոչ մի գործողություն չեն կատարել: Միջադեպը տևել է մոտ 40 րոպե, սակայն ճանապարհը փակած անձինք, հասկանալով, որ իրենց գործողություններն անօգուտ են, դադարեցրել են դրանք: Դրանից հետո քաղաքապետը սկսել է խոսել ցուցարարների հետ՝ խոստանալով, որ եթե Արգավանդով չգնան Երևան, 20 րոպեից ոստիկանների կողմից բերման ենթարկված բոլոր անձինք բաց կթողնվեն: Հրապարակում ինքն ու *****-ը որոշել են մոտենալ լրագրողներին և պատմել այն ամենը, ինչ իրենց հետ արել են Մասիսի քաղաքապետը, նրա եղբայրը և մնացած կողմնակիցները:

Քննիչի այն հարցին, թե կարող է նշել այն անձանց, ովքեր զենքեր են կրել, ինչպես նաև կրակոցներ արձակել, տուժողը պատասխանել է, որ **ինքը զենք տեսել է քաղաքապետի գրպանում, ինչպես նաև** ինչ-որ մեկը «Յաշիկ-բոաբուս» մեքենայի միջից իջել և սկսել է կրակել ցուցարարների վրա և օդ:

- Տուժող **.*********-ի վերոնշյալ ցուցմունքին նույնաբովանդակ տուժող ********* *********-*ի* նախաքննական ցուցմունքը, ով իր հերթին պնդել է, որ Հայանիստ-Հովտաշատ գյուղերի խաչմերուկը փակած ավտոմեքենաների մոտ տեսել է Մասիսի քաղաքապետ Դ.Համբարձումյանին, վերջինիս եղբորը՝ Գ.Համբարձումյանին և

բժշկական դիմակներով ու առանց դիմակի այլ անձանց: Այդ պահին **Դ.Համբարձումյանի կողքին՝ գոտկատեղի հատվածում, նկատել է զենք,** իսկ վերջինիս հետևում կանգնած անձի և մի քանի այլ անձանց ձեռքերին՝ փայտյա մահակներ: Միջադեպը տևել է մոտ 30 րոպե:

- Տուժողներ **.**********-ի և **.**********-ի՝ վարույթն իրականացնող մարմնին ուղղված նույնաբովանդակ դիմումները, ինչպես նաև վերջիններիս 2018 թվականի հունիսի 29-ի նույնաբովանդակ լրացուցիչ ցումունքներն այն մասին, որ պնդում են իրենց վերոնշյալ ցուցմունքները, սակայն չեն ցանկանում առերեսվել Դավիթի և իր եղբոր հետ, քանի որ նրանք հեղինակություն են, Դավիթը քաղաքապետ է, ուստի մտահոգություն ունեն իրենց և իրենց ընտանիքի անվտանգության համար, որ վերջինս, իր հնարավորություններն օգտագործելով, կարող է ազդել իրենց վրա:

- Տուժող **.**********-ի և Դ.Համբարձումյանի ու Գ.Համբարձումյանի հետ 2018 թվականի հուլիսի 24-ի առերես հարցաքննությունների արձանագրությունները, որոնց համաձայն՝ տուժողը պնդել է 2018 թվականի ապրիլի 22-ին Արարատի մարզի Հովտաշատ և Հայանիստ գյուղերի խաչմերուկում տեղի ունեցած դեպքի վերաբերյալ իր հայտնած տվյալները, միևնույն ժամանակ ասել, որ իր հետ առերեսվողներին առաջին անգամ է տեսնում, և իր հայտնած անձինք, որոնց ներկայացրել է որպես քաղաքապետ և նրա եղբայր, իր դիմաց նստած անձինք չեն, նրանց դեպքի վայրում չի տեսել: Քննիչի այն հարցերին, թե ինչպե՞ս կպարզաբանի այն հանգամանքը, որ իր նախկին ցուցմունքով նշել է, որ իր նկատմամբ բռնություն է գործադրել հենց Մասիսի քաղաքապետ Դ.Համբարձումյանը և վերջինիս եղբայր Գ.Համբարձումյանը, տուժողը պատասխանել է, որ այդ ասել է ցուցարարների խոսքով, նաև համացանցում տեսել է այլ տեսանյութ, որից հետո համոզվել է, որ իրականում այդ մարդիկ եղել են Դավիթ և Գոռ Համբարձումյանները, սակայն նայելով իր հետ առերեսվողներին՝ համոզվել է, որ նրանք չեն իր նկատմամբ բռնություն գործադրած անձինք, որոնց ներկայացրել է որպես Դ.Համբարձումյան և Գ.Համբարձումյան:

- Տուժողներ **.**********-ի և **.********-ի ըստ էության նույնաբովանդակ դատաքննական ցուցմունքներն այն մասին, որ դեպքից հետո իրենց լսածի հիման վրա են ասել, որ իրենց ծեծի ենթարկողները եղել են Դավիթ և Գոռ

Համբարձումյանները: ********** **********-ը պնդել է, որ իրեն հարվածողները եղել են մոտ 16-18 տարեկան՝ բժշկական դիմակներով երիտասարդներ, ինքը նույնիսկ Դ.Համբարձումյանին այնտեղ չի տեսել: Դատարանի հարցին ի պատասխան, որ նախաքննության ընթացքում օպերատիվ տվյալներ են ստացվել այն մասին, որ տուժող **.**********-ի վրա ապօրինի ազդեցություն է գործադրվել մեղադրյալներ Գոռ և Դավիթ Համբարձումյանների հոր՝ ******* **********-ի կողմից, տուժողը պատասխանել է, որ իր վրա ոչ ոք չի ազդել, չի ճնշել, իր տված ցուցմունքի համար իր հետ ոչ ոք չի խոսել: Իսկ տուժող **.*********-ը հայտնել է, որ ինքը որևէ կաշկանդվածություն չունի, նախաքննության ժամանակ ոչ մի դիմում չի գրել:

- Տուժող ******* *********-ի 2018 թվականի հունիսի 14-ի նախաքննական ցուցմունքն այն մասին, որ դեպքի օրը, երբ փորձել է անցնել խաչմերուկի մյուս հատվածը, դիմակավորված անձանցից մեկը դուբինկայով ուժեղ հարվածել է իր մեջքին, մեկ հատ էլ է ցանկացել հարվածել, սակայն ինքը փախել է և գնալով դեպի Հովտաշատ՝ այդ հատվածում տեսել է **********-ին՝ գլուխը արյունոտ, շորերը փոշոտված, տեսել է նաև ******-ին և նրա եղբորը, որոնց շորերը նույնպես փոշոտված էին: Նրանք իրեն հայտնել են, որ Մասիսի քաղաքապետ Դ.Համբարձումյանը, Գ.Համբարձումյանը, ինչպես նաև վերջիններիս թիկնապահներն են իրենց ծեծի ենթարկել, որից հետո ինքն ու ********-ը որոշել են այդ մասին հայտնել հեռուստատեսությամբ, ինքը լրատվամիջոցներին պատմել է այն, ինչին ականատես է եղել, ոչինչ չի ստել, բայց հետո իմացել է, որ Մասիսի քաղաքապետը և իր մտերիմներն իրեն կարող են վնասել, նույնիսկ քննիչի մոտ չի գնացել հարցաքննության, սակայն հասկանալով, որ չի կարող խուսափել, որոշել է գնալ և ամբողջ իրականությունը պատմել:

- Տուժող ******.*********-ի դատաքննական ցուցմունքն այն մասին, որ քարերով հարվածողները եղել են դիմակներով, ինչի պատճառով ոչ ոքի չի ճանաչել: Այնտեղ տեսել է մեղադրյալներից Դ.Համբարձումյանին, ում, բերման ենթարկված ցուցարարներին հետ բերել խոստանալուց բացի, որևէ այլ գործողություն կատարելիս չի տեսել, հատկապես զենքի գործածում չի տեսել նրա կողմից: Հրապարակում ինքը մի լրագրողի հարցազրույց է տվել, որի ժամանակ ասել է, որ

լսել է, որ միջադեպի մասնակիցները Մասիսից են եղել, եղել է Դ.Համբարձումյանը, բայց ինքը ոչինչ չի տեսել: Նախաքննական և դատարանում տրված ցուցմունքների միջև առկա հակասությունների վերաբերյալ հարցերին՝ տուժողը պատասխանել է, որ ցուցմունքի մեծամասնությունը գրվել է իր լսածի հիման վրա, ոչ թե տեսածի:

- Տուժող ********** **********-*ի* դատաքննական ցուցմունքն այն մասին, որ 2018 թվականին, չի հիշում որ ամսին, տուն գնալու ճանապարհին՝ Հայանիստ գյուղի մոտ, մի քանի հոգի հարվածել են իրեն: Հարվածողներից մեկի անունը Գոռ է եղել, մեղադրյալներից՝ Գոռ Համբարձումյանը, ով հարվածել է իր դեմքին, որից դեմքը կապտել էր: Ինքը բացի Գ.Համբարձումյանից ուրիշ անձի չի ֆիքսել, մնացած հարվածները հասցրել են իր մեքենային:

- Տուժող ******** **********-*ի* նախաքննական ցուցմունքն այն մասին, որ Հայանիստ-Հովտաշատ գյուղերի խաչմերուկում նկատել է ռուսական պետհամարանիշներով և առանց պետհամարանիշների «Յաշիկ», «Համեռ» և այլ արտասահմանյան մակնիշի կայանված ավտոմեքենաներ, որոնցից իջել են մոտ 20 անձ՝ մեծ մասը դիմակավորված և գլխարկներով, ու միանգամից մոտեցել են երթի մասնակիցներին, հարձակվել իրենց վրա և սկսել հարվածել, հայհոյել ու պահանջել հետ գնալ: Դրանից հետո սկսել են քարերով հարվածել իրենց: Այդ անձանցից մեկի ձեռքին նկատել է ավտոմեքենայի խլացուցիչ, ինչով վերջինս հարվածել է քաղաքացիներին: Իրենք նույնպես սկսել են քարերով հարվածել այդ անձանց, որպեսզի հեռանան և երթը կարողանան շարունակել: **Երբ շրջվել է և ցանկացել հեռանալ այդ վայրից, լսել է կրակոցի ձայն, նկատել է, որ կրակոցն արձակվել է սև գույնի «Յաշիկ» մակնիշի ավտոմեքենայից, որի վարորդի կողմից նստած անձի ձեռքում զենք է տեսել**: Լսել է ևս մի քանի կրակոցի ձայներ: Ժամանել են ոստիկանության աշխատակիցներ, ովքեր մոտեցել են քաղաքացիներին ծեծի ենթարկած անձանց: Հավաքվածներից տեղեկացել է, որ ոստիկանների հետ կազնած անձանց մեջ են Մասիս քաղաքի քաղաքապետ Դ.Համբարձումյանը և նրա եղբայր Գ.Համբարձումյանը, ովքեր միջադեպի ընթացքում հարվածներ են հասցրել քաղաքացիներին:

- Տուժող **.**********-ի և Դ.Համբարձումյանի առերես հարցաքննության արձանագրությունը և դրանից հետո լրացուցիչ հարցաքննությունը, համաձայն

որոնց՝ տուժողը պնդել է, որ միջադեպի ժամանակ բոլորն էին հարվածում, այդ թվում նաև իր հետ առերեսվողը:

- Տուժող **.**********-ի դատաքննական ցուցմունքն այն մասին, որ միջադեպի ժամանակ Դ.Համբարձումյանն ուղղակի կանգնած է եղել այնտեղ, իսկ ցուցմունքների միջև առկա հակասությունների վերաբերյալ հարցերին՝ տուժողը պատասխանել է, որ ինքը կրակոցի ժամանակ միայն ձեռք է տեսել, որը կրակել է, Դ.Համբարձումյանին վերջում է տեսել:

- Վկաներ ******* **********-*ի* և ********** **********-*ի* նախաքննական նույնաբովանդակ ցուցմունքներն այն մասին, որ Հանրապետության հրապարակում հանդիպել են **********-ին, ********-ին և *******-ին, ովքեր իրենց պատմել են, որ Հովտաշատ և Հայանիստ գյուղերի խաչմերուկում ցուցարարների և ճանապարհը փակած անձանց միջև վիճաբանություն է տեղի ունեցել, իսկ ճանապարհը փակել են Մասիս քաղաքի քաղաքապետը, եղբայրը և նրանց կողմնակիցները, ովքեր վիճաբանության ընթացքում ծեծի են ենթարկել ցուցարարներին, այդ թվում՝ նաև **********-ին և ********-ին: Վերջիններիցս տեղեկացել է նաև, որ միջադեպի ընթացքում հնչել են կրակոցներ:

- Վկաներ **.*********-ի և **.*********-ի դատաքննական նույնաբովանդակ ցուցմունքները, ըստ որոնց՝ վերջիններս ըստ էության տեղեկություններ չեն հայտնել դեպքի մասին, իսկ ցուցմունքների միջև առկա հակասությունների վերաբերյալ հարցերին վկա **.**********-ը պատասխանել է, որ չի հիշում, որ նման ցուցմունք տված լինի, իսկ վկա **.**********-ը հայտնել է, որ ինքն առաջին անգամ է եղել քննչական մարմնում և շատ խառնված է եղել:

- Վկա ********** **********-*ի* նախաքննական ցուցմունքն այն մասին, որ 2018 թվականի ապրիլի 22-ին Հովտաշատ-Հայանիստ գյուղերի խաչմերուկում տեսել է, որ երթին մասնակից քաղաքացիների անմիջապես դիմացի հատվածում, կանգնած են մի խումբ՝ մոտ 30 դիմակավորված և առանց դիմակի անձինք: Նրանցից մեկի ձեռքում նկատել է մահակ: Վերջիններս հետ են հրել քաղաքացիներին և պահանջել հեռանալ այդ վայրից: Նկատել է ծեծկոտուքն իր կողմից նշված դիմակավորված անձանց և երթի մասնակիցների միջև, ովքեր սկսել են միմյանց քարերով հարվածել, իսկ ինքը գնացել է գազալցակայանի մոտ, որ վնասվածք չստանա:

Գազալացակայանի մոտից տեսել է, որ մինչ այդ Հովտաշատ և Հայանիստ գյուղերի խաչմերուկում կանգնած սև գույնի արտասահմանյան արտադրության, բարձր ավտոմեքենան հետ շրջադարձ է կատարել և դիմացով կանգնել խաչմերուկից դեպի Հովտաշատ գյուղ տանող ճանապարհի կողմը, **վարորդը պատուհանից ձախ ձեռքով ատրճանակ է պարզել երթի մասնակիցների ուղղությամբ և կրակել**: Կրակոցի պահին իր հետ կանգնած են եղել նաև այլ քաղաքացիներ, ովքեր հավանաբար ճանաչելով այդ անձին, ասել են, որ «թույների Միերի թուլեն է՝ քաղաքապետ Դավոն»: **Նշված անձին ճանաչել է նաև ինքը, քանի որ քաղաքապետի ընտրություններին ընդառաջ այդ անձի նկարները փակցված են եղել և միանգամից հիշել է նրան:** Կրակոցից հետո քաղաքացիների մեջ խուճապ է սկսվել, բոլորն սկսել են այս ու այն կողմ վազել, իսկ իր կողմից նշված Դ.Համբարձումյանը կրակոց արձակելուց հետո ավտոմեքենայով ուղևորվել է Մասիս քաղաք տանող ճանապարհի ուղղությամբ: Դրանից հետո տեսել է ոստիկանության աշխատակիցների, որոնք սկսել են հանդարտեցնել քաղաքացիներին և դիմակավորված անձանց:

- **.**********-ի կողմից 2018 թվականի օգոստոսի 16-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ղեկավարին ներկայացված հաղորդումը, համաձայն որի՝ իր հարցաքննությունների ժամանակ քննիչը բազմիցս փորձել է սպառնալիքների, ճնշումների և այլ ապօրինի գործողությունների արդյունքում իրենից կորզել իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ: Նշել է նաև, որ ինքը Մասիսի քաղաքապետին առհասարակ տեսել է մեկ անգամ, այն էլ այդ ցույցի օրը, որտեղ նա փորձում էր հանգստացնել հավաքված բազմությանը, ցուցմունքն էլ իրականում չի կարդացել, և ինչ թելադրել է քննիչը, վերջում գրել է, որ գլուխն ազատի քննիչի ճնշումներից ու սպառնալիքներից:

- Վկա **.**********-ի դատաքննական ցուցմունքն այն մասին, որ ինքը գտնվել է դեպքի վայրում, խառնաշփոթի պատճառով ոչ ոքի դեմքը չի ֆիքսել, այդ ժամանակ Մասիսի քաղաքապետին չի ճանաչել: Ցույցը խաղաղ չի եղել, հավաքվածները բղավել են, կրակոցի ձայն ինքը չի լսել, հետո է իմացել դրա մասին: Հաղորդման վերաբերյալ հարցերին՝ պատասխանել է, որ ինքը տանը համակարգիչ չունի: Երկրորդ անգամ, երբ գնացել է, քննիչը սկսել է գոռալ իր վրա, այդ իսկ պատճառով

ինքը որոշել է գրել այդ դիմումը, չգիտի, դրան ինչ ընթացք են տվել, չի հետաքրքրվել: Չի հիշում դիմումը որտեղ է ստորագրել, իրեն ոչ ոք չի ստիպել, չի խնդրել: Ցուցմունքների հակասության վերաբերյալ հարցերին վկան պատասխանել է, որ քննիչը թելադրել է, ինքն էլ գրել է, այդ պահին շատ հոգնած է եղել և չի հասկացել ինչ է կատարվում: Ճիշտն իր դատաքննական ցուցմունքն է:

- Պաշտպանության կողմի վկա ********** **********-*ի* դատաքննական ցուցմունքը և ******** **********-*ին* հարցման ենթարկելու մասին արձանագրությունը, համաձայն որոնց՝ 2018 թվականի ապրիլի 22-ի՝ ժամը 16:00-17:00-ի սահմաններում, վերջիններս, գտնվելով Հայանիստ-Հովտաշատ գյուղերի խաչմերուկում, տեսել են, որ քաշքշուկ է տեղի ունեցել ոստիկանների և ցուցարարների միջև: Դավիթ Համբարձումյանը, գտնվելով այնտեղ, հանդարտության կոչ է արել: Ժողովրդի միջից լսվել են ձայներ, որ մարդկանց են բռնել և տարել, խնդրել են Դավիթին, որ նրանց ազատ արձակեն, Դավիթն էլ դիմել է ոստիկաններին, որ բոլոր ձերբակալված անձանց բաց թողնեն: Այդ ամբողջը տևել է 30-40 րոպե, այդ ընթացքում Դավիթը որևէ մեկի հետ չի վիճել, չի քաշքշել, չի հարվածել, ընդհակառակը, ամեն ինչ արել է, որ իրավիճակը հանդարտվի:

- Ոստիկանության ծառայողներ, վկաներ ********* **********-*ի*, ********* **********-*ի*, ******* *********-*ի*, ********** **********-*ի*, ********* *********-*ի* նախաքննական, ըստ էության նույնաբովանդակ ցուցմունքներն այն մասին, որ ահազանգի հիման վրա, 2018 թվականի ապրիլի 22-ին գնացել են Արարատի մարզի Հովտաշատ և Հայանիստ գյուղերի խաչմերուկ, որտեղ տեսել են մեծ թվով ավտոմեքենաներ, կայանված խաչմերուկի տարբեր ուղղություններում, նկատել են մի խումբ քաղաքացիների, խառնաշփոթ իրավիճակ՝ վիճաբանություն և քաշքշուկ: **.*********-ը և **.*******-ը հայտնել են, որ վիճաբանողների մեջ եղել են նաև դիմակավորված անձինք, որոնց կողմում, ի թիվս այլոց, նկատել են նաև Մասիս քաղաքի քաղաքապետ Դ.Համբարձումյանին, նրա եղբորը՝ Գ.Համբարձումյանին, իսկ քննիչի հարցերին ի պատասխան նշել են, որ վերջիններիս կողմից կոնկրետ գործողություն կամ նրանց ձեռքում որևէ առարկա, իսկ Դավիթ Համբարձումյանի գոտկատեղին զենք չեն տեսել, նրանք դիմակավորված անձանց կողմում են կանգնած եղել: Վկա **.**********-ն էլ իր հերթին հայտնել է, որ միջադեպի ժամանակ նկատել

է միայն Դ.Համբարձումյանին, ով մասնակիցներին փորձում էր հանդարտեցնել: **.Վ**********-ը և **.*********-ը նույնպես հայտնել են, որ ճանապարհը փակած անձանցից ոչ բոլորն էին դիմակավորված, մասնավորապես այնտեղ տեսել են նաև Մասիսի քաղաքապետ Դ.Համբարձումյանին, և տեղում օպերատիվ աշխատանքներն իրականացնելու արդյունքում պարզվել է, որ միջադեպին մասնակցել են, ի թիվս այլոց, Մասիս քաղաքի քաղաքապետ Դ.Համբարձումյանը, նրա եղբայրը՝ Գ.Համբարձումյանը:

- Վերոնշյալ ոստիկանների դատաքննական, ըստ էության նույնաբովանդակ ցուցմունքներն այն մասին, որ դեպքի մանրամասները չեն հիշում, նախաքննական ցուցմունքները ճիշտ են, գրված են իրենց խոսքերից, իսկ հակասությունները կապված են տևական ժամանակ անցնելու հետ[5]:

- Որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված՝ «Հովտաշատից հանրապետության հրապարակ» վերտառությամբ տեսանյութը և այն 2018 թվականի մայիսի 19-ին զննելու մասին կազմված արձանագրությունը, համաձայն որի՝ 25-30 տարեկան երկու տղամարդ (ըստ գործի նյութերի՝ տուժողներ ********** **********-ը և ********* *******-ը) Հայաստանի Հանրապետության հրապարակում բարձրախոսն իրենց ուղղված անձին հայտնում են, որ իրենց դիմացը կտրել են առանց համարինիշի մեքենաներ, և, ի թիվս այլնի, «**դուբինկաներով», զենքերով, մահակներով, ատրճանակներով հարձակվել են իրենց վրա**: Վնասվածքներ ստացած տղան ցույց է տալիս իր ստացած վնասվածքները և հայտնում, որ դրանք հասցրել է Մասիսի քաղաքապետն իր թիկնազորով[6]:

- Որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված՝ «Օդանավակայանից Մասիս» և «Hayainst Krakot» վերտառությամբ տեսանյութերը և դրանք 2018 թվականի հունիսի 7-ին զննելու մասին արձանագրությունը, համաձայն որի՝ նշված տեսանյութերում պատկերված է դեպքի վայրը՝ Հայանիստ-Հովտաշատ գյուղերի խաչմերուկը: «Hayainst Krakot» վերտառությամբ 29 վայրկյան տևողությամբ տեսանյութում երևում է, որ **բենզալցակայանի մոտ հավաքված անձինք բղավոցներով առարկաներ են նետում ճանապարհի դիմացի հատվածում**

[5] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 38-րդ, թերթեր 52-91:
[6] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 7-րդ, թերթ 102, հատոր 8-րդ թերթեր 127-128:

հավաքված անձանց ուղղությամբ, ինչպես նաև տեսանյութում լսվում են կրակոցի թվով 8 ձայներ, «Օդանավակայանից Մասիս» վերտառությամբ, ավտոմքենայի սրահի դիմապակուց նկարված 33 վայրկյան տևողությամբ տեսանյութում երևում է, որ կայանված են բազմաթիվ ավտոմեքենաներ, որոնց **մեջտեղի հատվածում երևում է մեջքի հատվածում զենք պահած անձնավորություն**[7]**:**

- Որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված՝ տուժող ********** **********-ի կողմից 2018 թվականի ապրիլի 22-ին Արարատի մարզի Հովտաշատ և Հայանիստ գյուղերի խաչմերուկում տեղի ունեցած դեպքի վերաբերյալ ներկայացված տեսանյութը և այն վերջինիս մասնակցությամբ զննելու մասին արձանագրությունը, համաձայն որի՝ **տեսագրությունը 1 րոպե 31 վայրկյան տևողության է,** տեսագրության 0:05 վայրկյանին մասնակիցը հայտարարել է, որ տեսանյութում երևում է իրեն և իր ավտոմեքենային վնասվածքներ հասցրած անձը՝ Գ.Համբարձումյանը, ինչպես նաև տեսանյութում երևում է Մասիսի քաղաքապետ Դ.Համբարձումյանը: Մասնակցի հայտարարած անձինք կանգնած են մի խումբ անձանց մեջ, որոնց մեջ կան նաև դիմակավորված անձինք, ովքեր իրենց հետ գտնվող այլ անձանց հետ հրում են քաղաքացիներին, բղավում, անկանոն հարվածներ կատարում գետնին ընկած անձանց ուղղությամբ, լսվում են նաև սեռական բնույթի հայհոյանքներ[8]:

- 2018 թվականի հուլիսի 27-ին կազմված՝ վկա ********** *********-ի մասնակցությամբ տեսանյութերը զննելու մասին արձանագրությունը, համաձայն որի՝ **.**********-ը, տեսանյութի 0:05 վայրկյանին տեսանյութի մեջ երևացող կապույտ վերնաշապիկով անձի կողքին կանգնած սև հագուստով, սև մազերով և սև ակնոցներով անձին մատնացույց անելով, հայտնել է, որ նշված անձը հանդիսանում է Մասիսի քաղաքապետ Դավիթ Համբարձումյանը: Նրա նկարը տեսել է Մասիս քաղաքի քաղաքապետի ընտրություններին ընդառաջ, բացի այդ էլ դեպքից հետո նրան տեսել է հեռուստատեսությամբ և չի շփոթում որևէ այլ անձի հետ: Մասնակիցը հայտարարել է, որ իր կողմից մատնանշված անձը 2018 թվականի ապրիլի 22-ին

[7] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9-րդ, թերթեր 16-19:
[8] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 12-րդ, թերթեր 228-229:

Արարատի մարզի Հովտաշատ և Հայանիստ գյուղերի խաչմերուկում **սև ավտոմեքենայի միջից կրակել է երթի մասնակիցների ուղղությամբ:**

- Դատաբժշկական փորձաքննության թիվ 0047/h եզրակացությունը, համաձայն որի՝ ******* *********-ի ստացած մարմնական վնասվածքը՝ աջ սրունքի միջին երրորդականի միջանցիկ հրազենային վնասվածքի ձևով, հասցվել է հրազենից արձակած գնդակի ներգործության հետևանքով, հնարավոր է նշված ժամկետում և պատճառել է առողջությանը միջին ծանրության վնաս:

- Դատաձգաբանական և դատաքիմիական համալիր փորձաքննության թիվ 1106-18 եզրակացությունը, համաձայն որի՝ դեպքի պահին **.**********-ի հագին եղած և փորձաքննությանը ներկայացված տաբատի աջ փողքի հետևամասում առկա **վնասվածքը հանդիսանում է հրազենային մուտքի թափանցող վնասվածք, որը կարող է պատճառված լինել մոտ 5,5մմ-ից մինչև 9մմ տրամաչափ ունեցող գնդակով՝** կրակող զենքի համար լիցքի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններից դուրս տարածությունից կամ արգելապատնեշի միջով, հետևից առաջ ուղղությամբ կատարված մեկ կրակոցի արդյունքում: Վնասվածքը պատճառող գնդակի տեսակը և տրամաչափը ավելի ստույգ որոշել հնարավոր չէ, քանի որ վնասվածքը չի պարունակում այդ մասին վկայող համապատասխան հատկանիշներ:

- Դատաբժշկական փորձաքննության թիվ 0205 եզրակացությունը, համաձայն որի՝ ********** ********-ի ստացած մարմնական վնասվածքները՝ գլխի նախկին սալջարդ վերքերից մնացած՝ ներկայումս սպիների և ճակատի նախկին քերծվածքից մնացած ներկայումս էպիթելիզացված մակերեսի ձևով հասցվել են՝ բութ, կոշտ, առարկաներով, հնարավոր է նշված ժամկետում և պատճառել են առողջությանը թեթև վնաս:

- Դատաբժշկական փորձաքննության թիվ 1109 եզրակացությունը, համաձայն որի՝ ****** ********-ի մոտ փորձաքննության պահին վաղեմությամբ դեպքին համապատասխանող մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել: Ներկայումս որոշել, դեպքի հետ կապված եղել են մարմնական վնասվածքներ, թե՝ ոչ, հնարավոր չէ՝ փորձաքննությանն ուշ ներկայանալու և բժշկական փաստաթղթերի բացակայության պատճառով:

- Դատաապրանքագիտական փորձաքննության թիվ 90-18, դատաապրանքագիտական և դատահետքաբանական համալիր փորձաքննության հմ 84-18 և դատաապրանքագիտական փորձաքննության թիվ 92 եզրակացությունները, համաձայն որոնց՝ համապատասխանաբար «CHEVROLET AVEO 1,2» մակնիշի *** ** ** հաշվառման համարանիշի ավտոմեքենան վնասելու հետևանքով պատճառված նյութական վնասի չափի ընդհանուր շուկայական արժեքը 2018 թվականի ապրիլի 22-ի դրությամբ գնահատվել է է 110.000 ՀՀ դրամ, «NISSAN MARCH 1.2 L» մակնիշի ** ** **** հաշվառման համարանիշի ավտոմեքենայինը՝ 33.000 հազար դրամ, «VAZ 2107» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենայինը՝ 14.000 դրամ: Փորձաքննությանը տրամադրված «NISSAN MARCH 1.2 L» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենայի առջևի աջ դռան մակերեսին առկա հետքերի հետազոտման արդյունքում պարզվել է, որ դրանք մեխանիկական բնույթի են և կարող էին առաջանալ օտար, համեմատաբար պինդ մակերես ունեցող առարկայով (հնարավոր է գործում նշված հանգամանքներում՝ ոտքով) հարվածելու արդյունքում[9]:

13.2. Առաջին ատյանի դատարանը, Դ.Համբարձումյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղավոր ճանաչելով, իսկ Գ.Համբարձումյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքը նույն օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով վերաորակելով և նրան մեղավոր ճանաչելով, իր դատավճռով արձանագրել է հետևյալը. *«(…) Մեղադրյալ Դավիթ Համբարձումյանի արարքում մի խումբ անձանց հետ դիտավորությամբ կոպիտ կերպով հասարակական կարգը խախտելու, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով և զուգորդվել նույն օրը՝ ժամը 19:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում կայանալիք հանրահավաքին մասնակցելու նպատակով դեպի նշված հրապարակ երթ կազմակերպած մասնակիցների նկատմամբ նախապես իրենց հետ վերցված զենքի և որպես զենք հանդիսացող առարկաների գործադրմամբ բռնություն գործադրելով և գույքը ոչնչացնելով, հասցրվում է քրեական գործով ձեռք բերված և միմյանց հետ*

[9] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 38-րդ, թերթեր 46-52:

*փոխկապակցված մի շարք վերաբերելի ապացույցներով, մասնավորապես՝ որպես այլ փաստաթղթեր ապացույց ճանաչված «Հովտաշատից հանրապետության հրապարակ» վերտրաոությամբ տեսանյութով, «Օդանավակայանից Մասիս» և «Hayainst Krakot» վերտրաոությամբ տեսանյութերով, տուժող ********** **********-ի կողմից 22.04.2018թ. Արարատի մարզի Հովտաշատ և Հայանիստ գյուղերի խաչմերուկում տեղի ունեցած դեպքի վերաբերյալ ներկայացված տեսանյութի առկայությամբ, մեղադրյալ Դավիթ Համբարձումյանի ***-**-**-** բջջային հեռախոսահամարի վերծանումների առկայությամբ, մեղադրյալ Դավիթ Համբարձումյանի ***-**-**-** բջջային հեռախոսահամարի վերծանումների առկայությամբ, 27.07.2018թ. վկա ********** **********-ի, մասնակցությամբ տեսանյութերը զննելու մասին կազմված արձանագրությամբ, 27.07.2018թ. վկա ******* **********-ի մասնակցությամբ տեսանյութերը զննելու մասին կազմված արձանագրությամբ, 19.08.2018թ. վկա ****** *********-ի, մասնակցությամբ տեսանյութերը զննելու մասին կազմված արձանագրությամբ, 19.08.2018թ. վկա ****** ***********-ի մասնակցությամբ տեսանյութերը զննելու մասին կազմված արձանագրությամբ, 20.08.2018թ. վկա ******* *********-ի մասնակցությամբ տեսանյութերը զննելու մասին կազմված արձանագրությամբ, զննում կատարելու մասին 26.04.2018թ. կազմված արձանագրությամբ, որի համաձայն՝ ****** ***********-ի մասնակցությամբ զննության է ենթարկվել Հայանիստ համայնքին պատկանող «Շեվռոլետ» մակնիշի *** ** ** հաշվառման համարանիշի ավտոմեքենան, զննում կատարելու մասին 22.05.2018թ. կազմված արձանագրությամբ, որի համաձայն ******* *********-ի մասնակցությամբ զննության է ենթարկվել «Վազ 2107» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենան, դատաբժշկական փորձաքննության փորձագետի թիվ 0047/հ եզրակացությամբ, դատաբժշկական փորձաքննության փորձագետի թիվ 0205 եզրակացությամբ, դատաձգաբանական և դատաքիմիական համալիր փորձաքննության թիվ 1106-18 եզրակացությամբ, տուժողներ՝ ********** **********-ի, ********* *********-ի, ********** **********-ի, ********** **********-ի, ********** **********-ի, ****** **********-ի ցուցմունքներով, վկաներ՝ ******* **********-ի, ******** *********-ի, ***** **********-ի, ***** ***********-ի, ***** ************-ի,*

******* **********-ի, ******* **********-ի, ********* **********-ի, ********* **********-ի, ******* **********-ի, ********** **********-ի, ****** **********-ի ցուցմունքներով:*

Դատարանը հարկ է համարում անդրադարձ կատարել սույն դրվագով մեղադրյալ՝ Դավիթ Միերի Համբարձումյանի մեղքը հիմնավորելու տեսանկյունից առանցքային նշանակություն ունեցող փուժողների և վկայի նախաքննության և դատաքննության ընթացքում տրված ցուցմունքների արժանահավատության, դրանց գնահատման հարցին:

*(...) Դատարանը հարկ է համարում անդրադարձ կատարել վկա ****** **********-ի կողմից դատաքննության և նախաքննության ընթացքում տրված ցուցմունքների արժանահավատության հարցին: Մասնավորապես, վկայի դատավարական կարգավիճակում ********* **********-ը 2018 թվականի ապրիլի 22-ին Հայանիստ-Հովտաշատ գյուղերի խաչմերուկի մոտ տեղի ունեցած դեպքի վերաբերյալ դեպքից շուրջ 3 ամիս անց տվել է մանրամասն ցուցմունք (...), նկարագրել հանգամանք կատարած անձանց, այդ թվում մեղադրյալ Դավիթ Համբարձումյանին և վերջինիս գործողությունները՝ մասնավորապես, վերջինիս կողմից ավտոմեքենայի միջից անձանց ուղղությամբ կրակ արձակելու մասին: Հատկանշական է այն հանգամանքը, որ վկա ******* **********-ի ցուցմունքը համակարգչով արձանագրելուց հետո վերջինս իր ցուցմունքի յուրաքանչյուր էջի տակ ստորագրել է, որից հետո ցուցմունքի վերջում իր ձեռքով՝ ձեռագիր գրել և ևս մեկ անգամ արձանագրել է, որ Դավիթ Համբարձումյանը հրազենից կրակոց է արձակել երթի մասնակիցների ուղղությամբ: Հարկ է արձանագրել նաև, որ նույն օրը վկա ******* **********-ը մասնակցել է նաև մեկ այլ քննչական գործողության և վերջինիս մասնակցությամբ քննիչի կողմից զննվել է տեսագրություն, որում վերջինս կրկին ճանաչել է մեղադրյալ Դավիթ Համբարձումյանին և հայտարարել, որ 2018 թվականի ապրիլի 22-ին վերջինս կրակ է արձակել երթի մասնակիցների ուղղությամբ: Հարկ է արձանագրել նաև, որ հիշյալ քննչական գործողությանը, բացի քննիչից և վկայից մասնակցել են նաև երկու ընթերականեր: Նման պայմաններում Դատարանը ոչ արժանահավատ է դիտարկում վկայի դատարանում տված հակասական ցուցմունքները, ինչպես նաև նախաքննության ընթացքում ՀՀ հատուկ*

քննչական ծառայության պետին հասցեագրված՝ հանցագործության մասին հաղորդմամբ հայտնած տեղեկությունները: Դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքով, որ վկան դատարանում տվեց այն բովանդակությամբ հակասական ցուցմունք, ինչ բովանդակություն եղել է վերջինիս կողմից ներկայացված հաղորդմամբ, իսկ հիշյալ հաղորդման բովանդակության վերաբերյալ հարցերին ի պատասխան վկան Դատարանում հայտնեց, որ իրեն օգնել են, որպիսի նման ձևակերպումներով հաղորդում տա, սակայն չնշեց կամ չհիշեց ով է օգնել, ինչ պայմաններում: Հայտնեց նաև, որ տանը համակարգիչ չունեն, անձամբ չի կարող համակարգչից օգտվել: Նման պայմաններում Դատարանի համար անարժանահավատ են վկայի պնդումներն առ այն, որ վարույթն իրականացրած քննիչի «դրդմամբ» է նման բովանդակությամբ ցուցմունք տվել: Դատարանի նման դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ վկան իր նախաքննական ցուցմունքի վերջում ձեռագիր գրել է այն, ինչ արձանագրված է քննիչի կողմից համակարգչով, բացի այդ, նույն օրը վկան երկու ընթերակաների մասնակցությամբ կատարված զննության ընթացքում կատարել է՝ իր նախաքննական ցուցմունքին նույնաբովանդակ հայտարարություն, ուստի նման պայմաններում Դատարանի գնահատմամբ վկայի կողմից դատաքննության ընթացքում տված ցուցմունքները չեն կարող արժանահավատ համարվել և ակներև է, որ նախաքննության որոշակի փուլից սկսած որոշակի միջամտության և (կամ) ազդեցության արդյունքում վկան սկզբում հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայություն, այնուհետև Դատարանում հաղորդմանը նույնաբովանդակ ոչ արժանահավատ ցուցմունք տվել:

*Ինչ վերաբերվում է փուժողներ ******* **********-ի, ********** **********-ի, ******* *********-ի և ********* **********-ի դատաքննական և նախաքննական ցուցմունքների արժանահավատությանը, ապա Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ հիշյալ անձինք նախաքննության սկզբնական փուլում՝ դեպքից անմիջապես հետո, մի քանի անգամ հարցաքննվել և իրենց ցուցմունքներով մանրամասն նկարագրել են (...) Դավիթ Համբարձումյանի, Գոռ Համբարձումյանի, ինչպես նաև ինքնությունները չպարզված այլ անձանց գործողությունները, վերջիններս կողմից իրենց նկատմամբ բռնություն գործադրելու հանգամանքը,*

*Դավիթ Համբարձումյանի մոտ զենքի առկայության հանգամանքը, որից հետո վերջիններս նույնաբովանդակ դիմումներ են հասցեագրել վարույթն իրականացրած մարմին այն մասին, որ իրենց անվտանգությունից ելնելով վախեր ունեն Դավիթ Համբարձումյանի և Գոռ Համբարձումյանի հետ առերես հարցաքննվելուց, սակայն պնդում են իրենց ցուցմունքները, ավելին՝ տուժող ****** *********-ը Դավիթ Համբարձումյանի հետ առերես հարցաքննվելուց հետո լրացուցիչ ցուցմունքով կրկին պնդել է իր սկզբնական ցուցմունքը: Նմանաբնույթ իրավիճակ է ստեղծվել նաև ******* **********-ի պարագայում, երբ վերջինս լրացուցիչ ցուցմունքով հայտնել է, որ վախեր ունի Դավիթ և Գոռ Համբարձումյաններից: Հատկանշական է այն հանգամանքը, որ հիշյալ տուժողները բացառությամբ՝ ****** **********-ի, միմյանց հետ փոխկապակցված են և հանդիսանում են մերձավոր ազգականներ և վերջիններս իրենց նույնաբովանդակ ցուցմունքները փոխել են գրեթե միևնույն ժամանակահատվածում, նախաքննության ընթացքում առերես հարցաքննության ընթացքում սկզբնական ցուցմունքներից տարբերվող ցուցմունք տալու վերաբերյալ տվել են նույնաբովանդակ պարզաբանում՝ մասնավորապես, մեղադրյալների անձով պայմանավորված կաշկանդվածություն ունենալու վերաբերյալ: Հարկ է նշել նաև, որ ********* **********-ը Դավիթ Համբարձումյանի հետ առերես հարցաքննության ընթացքում պնդել է իր նախկինում տրված ցուցմունքը, սակայն դատարանում տված ցուցմունքով փորձ արեց հերքել Դավիթ Համբարձումյանի մասնակցությունը կատարված դեպքին: Դատարանի գնահատմամբ տուժողների դատաքննության ընթացքում տված ցուցմունքները արժանահավատ չեն կարող դիտարկվել և ըստ էության տուժողները դատաքննության ընթացքում ընդունեցին նախաքննության ընթացքում իրենց տված սկզբնական ցուցմունքների ամբողջ բովանդակությունը՝ բացառությամբ այն մասի, որ իրենց նկատմամբ ոտնձգությունները կատարվել են Դավիթ Համբարձումյանի և Գոռ Համբարձումյանի կողմից: Նման պայմաններում Դատարանը հաշվի առնելով նաև օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում տուժողներից մեկի վրա կոնկրետ անձանց կողմից տեղի ունեցած ազդեցության վերաբերյալ ստացված տվյալները (...), ինչպես նաև սույն դրվագով քրեական գործի նախաքննության ընթացքում ստացված այլ վերաբերելի արժանահավատ և փոխկապակցված ապացույցները, Դատարանը գտնում է, որ*

փուժողների կողմից դատաքննության ընթացքում տված ցուցմունքները չեն կարող արժանահավատ համարվել և ակներև է, որ սույն քրեական գործի քննության որոշակի փուլից սկսած որոշակի միջամտության և (կամ) ազդեցության արդյունքում վերը նշված անձինք փոխել են իրենց սկզբնական ցուցմունքները և Դատարանում տվել են ոչ արժանահավատ ցուցմունքներ:

Հաշվի առնելով փուժողների և վկայի կողմից դատաքննության ժամանակ տրված խիստ հակասական ցուցմունքները, Դատարանը գտնում է, որ հիշյալ անձանց դատաքննական ցուցմունքները արժանահավատ չեն, չունեն ներքին տրամաբանություն և նպատակ են հետապնդել ամեն կերպ հերքել իրենց կողմից նախաքննության ընթացքում տրված այն ցուցմունքները, որոնք տվել են՝ Դավիթ Համբարձումյանի և Գոո Համբարձումյանի դեմ:

Հիմք ընդունելով դատաքննության ընթացքում հետազոտված վերը մեջ բերված թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցները, Դատարանը գտնում է, որ քրեական գործով ձեռք է բերվել բավարար ապացույցների համակցություն, որոնց պայմաններում հասպարտապես հնարավոր է հանգել այն համոզման, որ 2018 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը 16:00-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում, Արարատի մարզի Մասիս քաղաքի քաղաքապետ Դավիթ Համբարձումյանը, վերջինիս եղբայր՝ Գոո Համբարձումյանը և քրեական գործով ինքնությունը չպարզված այլ անձինք, Արարատի մարզի Հայանիստ-Հովտաշատ գյուղերի խաչմերուկի բանուկ հատվածում, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ, հանրահավաքի մասնակիցների երթը դեպի Երևան քաղաքի Հանրապետության հրապարակ արգելելու, խոչընդոտներ ստեղծելու նպատակով փևական ժամանակ առանց հաշվառման համարանիշերի ավտոմեքենաներով փակել են նշված խաչմերուկից դեպի Երևան քաղաք տանող ճանապարհը, որի ընթացքում Դավիթ Համբարձումյանը, Գոո Համբարձումյանը և մյուսները, խմբի կազմում միասնական դիտավորությամբ, մեկը մյուսի գործողությունները գիտակցելով և փոխլրացնելով, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ, հայհոյանքներ են հնչեցրել հանրահավաքի մասնակիցների հասցեին, նրանց տեղաշարժը կանխելու նպատակով բռնություն են գործադրել՝ ոտքերով, ձեռքերով և որպես զենք

*օգտագործվող, նախապես իրենց հետ վերցրած մահակներով և քարերով հարվածներ են հասցրել երթի մասնակիցներին, այդ ընթացքում Դավիթ Համբարձումյանը գոտկատեղի հատվածում կրել է զենքին նմանվող առարկա՝ հասարակության անդամների մոտ ստեղծելով վախի և սարսափի մթնոլորտ և իմքի կազմում, այդ թվում՝ [Գոո] Համբարձումյանի հետ, բռունցքներով և ոտքերով հարվածներ են հասցրել ցույցի մասնակիցներ ****** *********-ի և ******** **********-ի մարմնի տարբեր մասերին՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով: Այդ ամենի ընթացքում իմքի՝ ինքնությունը չպարզված մյուս անդամները մահակներով, ավտոմեքենայի խլացուցիչով և այլ առարկաներով, ինչպես նաև ձեռքերով նույնպես զուգահեռ հարվածներ են հասցրել ******* ********-ին, ******** *********-ին, ********* **********-ին և խաղաղ երթի այլ մասնակիցներին: Միջադեպի ընթացքում Դավիթ Համբարձումյանը ևս գույնի ավտոմեքենայի սրահից որպես զենք օգտագործվող, քննությամբ չպարզված առարկայի գործադրմամբ կրակ է արձակել խաղաղ երթի մասնակիցների ուղղությամբ, որի հետևանքով վտանգվել է հասարակական անվտանգությունը՝ միաժամանակ հասարակության անդամների մոտ ստեղծելով վախի և սարսափի մթնոլորտ: Ինքնությունը չպարզված իմքի մյուս անդամի կողմից հրազենի գործադրման հետևանքով ********** ******** *********-ին պատճառվել է աջ սրունքի միջին երրորդականի միջանցիկ հրազենային վնասվածք՝ նրա առողջությանը պատճառելով միջին ծանրության վնաս: Նույն միջադեպի ժամանակ Գ.Համբարձումյանը ձեռքով հարվածել է **.**********-ին՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք, որն արտահայտվել է աջ աչքի ստորին կոպի արյունազեղման ձևով, որից հետո ոտքով հարվածել է վերջինիս կողմից վարվող «Նիսան» մակնիշի ** ** *** համարանիշի ավտոմեքենային՝ **.**********-ին պատճառելով 33.000 ՀՀ դրամի գույքային վնաս: Հանցավոր իմքի վերոհիշյալ համատեղ գործողությունների արդյունքում վնասվել են Արարատի մարզի Հայանիստ համայնքին պատկանող, ******* *********-ի կողմից վարվող «CHEVROLET AVEO 1,2» մակնիշի *** ** ** հաշվառման համարանիշի, ****** **********-ին պատկանող «Վազ 2107» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի*

*ավտոմեքենաները՝ Հայանիստ համայնքին պատճառելով 110.000, իսկ **.**********-ին՝ 14.000 ՀՀ դրամի գույքային վնաս:*

*Անդրադառնալով ի պաշտպանություն՝ մեղադրյալ Դավիթ Միերի Համբարձումյանի բերված ապացույցների, մասնավորապես՝ մեղադրյալ Դ.Համբարձումյանի և վկա ******* **********-ի ցուցմունքների, ինչպես նաև ներկայացված այլ փաստաթղթերի արժանահավատության հարցին, Դատարանը գտնում է, որ մեղադրյալ Դավիթ Համբարձումյանի տված ցուցմունքները չեն կարող արժանահավատ դիտարկվել, ցուցմունքներով հայտնած տեղեկությունները չեն հաստատվում քրեական գործով ձեռք բերված և հետազոտված որևէ այլ ապացույցով, նման բովանդակությամբ ցուցմունք տալով վերջինս նպատակ է հետապնդել խուսափել՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքի համար քրեական պատասխանատվությունից: Ինչ վերաբերվում է ******* **********-ի ցուցմունքին, ապա Դատարանն այն ևս արժանահավատ չի դիտարկում հաշվի առնելով այն հանգամանքը, որ **.**********-ի կողմից դեպքի ժամանակահատվածում օգտագործված բջջային հեռախոսահամարն դեպքի ժամին չի սպասարկվել Հայանիստ-Հովտաշատ գյուղերի հատվածում, հետևաբար նաև վերջինիս կողմից ցուցմունքով հայտնած տեղեկությունները չեն հաստատվում քրեական գործով հետազոտված այլ ապացույցներով, վերջինս հիշյալ բովանդակությամբ ցուցմունք տալով նպատակ է հետապնդել որևէ կերպ օգնել մեղադրյալ Դավիթ Համբարձումյանին, ուստի հիշյալ ցուցմունքը ևս արժանահավատ չի կարող դիտարկվել: (...):*

Այսպիսով՝ ապացուցված է մեղադրյալ Դավիթ Միերի Համբարձումյանին վերագրվող փաստական հանգամանքները (արարքը) և այդ արարքի քրեական հակահիրավականությունը, այդ արարքը կատարվել է նրա կողմից և ապացուցված է վերջինիս մեղավորությունը տվյալ արարքը կատարելու մեջ: (...):

Հաստատված համարելով մեղադրյալ Դավիթ Միերի Համբարձումյանի մեղավորությունը 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ՝

Դատարանը գտնում է, որ վերջինս ենթակա է քրեական պատասխանատվության և պատժի: (...)

*Դատարանը մեղադրյալի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առնում ինչպես նրա կատարած գործողությունների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, այնպես էլ նրա անձը բնութագրող տվյալները: Դատարանը (...) որպես Դավիթ Համբարձումյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ հաշվի է առնում վերջինս խնամքին գտնվող 4 անչափահաս երեխաների՝ 2012 թվականի հունվարի 16-ին ծնված ******* ********* **********-ի, 2014 թվականի սեպտեմբերի 06-ին ծնված ********* ********* **********-ի, 2014 թվականի սեպտեմբերի 06-ին ծնված ******** ******* **********-ի և 2021 թվականի օգոստոսի 07-ին ծնված ********* ********* *********-ի առկայությունը: (...)*

Դատարանը (...) արձանագրում է, որ Դավիթ Համբարձումյանի պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանքներ առկա չեն:

Դատարանը, որպես մեղադրյալ Դավիթ Համբարձումյանի անձը բնութագրող հատկանիշ արձանագրում է վերջինիս դատվածություն չունենալու հանգամանքները: (...)

Դատարանը գտնում է, որ մեղադրյալ Դավիթ Միերի Համբարձումյանը իր կատարած՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցագործության համար ենթակա է պատժի ազատազրկման ձևով 6 (վեց) տարի 3 (երեք) ամիս ժամկետով, ինչը տվյալ դեպքում, համաչափ է կատարված կոնկրետ հանցագործության բնույթին, վտանգավորության աստիճանին, այն կատարելու հանգամանքներին, հանցավորի անձին, բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածով սահմանված՝ արդարության և պատասխանատվության անհատականացման, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից և բավարար է ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակների իրականացման տեսանկյունից: (...)

Անդրադառնալով Գոո Միերի Համբարձումյանին՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված

մեղադրանքին և մեղադրյալի արարքի իրավական գնահատականի փոփոխությանը, Դատարանը արձանագրում է հետևյալը.

Հիմնական դատաքննության ընթացքում պատշաճ իրավական ընթացակարգով հետազոտված թույլատրելի ապացույցների հիման վրա, դրանց ձևի և բովանդակության վերլուծության, այլ ապացույցների հետ համադրելու միջոցով, գնահատելով դրանք վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, իսկ բոլոր ապացույցների համակցությունը՝ հիմնավոր եզրահանգիչ դատավարական ակտ կայացնելու համար բավարարության տեսանկյունից, դրանց պատշաճ հետազոտման և վերլուծության վրա հիմնված ներքին համոզմամբ, մեղադրյալի մեղավորության վերաբերյալ չփարատվող բոլոր ողջամիտ կասկածները նրա օգտին մեկնաբանելով, Դատարանը հաստատված է համարում, որ մեղադրյալ Գոո Միերի Համբարձումյանը կատարել է իրեն մեղսագրված արարքը, որը համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին հետևյալ պատճառաբանությամբ.

(...)

Գոո Միերի Համբարձումյանին առաջադրված մեղադրանքի ձևակերպումներից անկերեւն է դառնում, որ վերջինիս՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքի կատարումը մեղսագրվել է բացառապես Դավթի Միերի Համբարձումյանի կողմից այդպիսի արարք կատարելու համար, այլ խոսքով նախաքննական մարմինն առաջնորդվել է այն պրամաբանությամբ, որ եթե խմբով խուլիգանություն կատարելու ժամանակ խմբի անդամներից մեկը հիշյալ արարքի օբյեկտիվ կողմի գործողությունները կատարում է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ, հետևաբար ենթադրվում է, որ հիշյալ հանցակազմի որակյալ հատկանիշ կարող է մեղսագրվել նաև խմբի մյուս անդամներին:

(...) Դատարանն արձանագրում է, որ քրեական գործով ձեռք բերված և միմյանց հետ փոխկապակցված մի շարք վերաբերելի ապացույցներով, (...) չի հաստատվում Գոո Միերի Համբարձումյանի կողմից 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքի օբյեկտիվ կողմը կատարելու վերաբերյալ որևէ փվյալ, ավելին՝ քրեական գործով

*ձեռք բերված և պատշաճ ընթացակարգերի շրջանակներում հետազոտված վերը թվարկված ապացույցներով հաստատվել է, որ Գոո Մհերի Համբարձումյանը 2018 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը 16:00-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում, Արարատի մարզի Հայանիստ-Հովտաշատ գյուղերի խաչմերուկի բանուկ հատվածում մի խումբ անձանց հետ դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով և զուգորդվել նույն օրը՝ ժամը 19:00-ի սահմաններում Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում կայանալիք հանրահավաքին մասնակցելու նպատակով դեպի նշված հրապարակ երթ կազմակերպած մասնակիցների նկատմամբ գործադրմամբ բռնություն գործադրելով, մասնավորապես՝ քրեական գործով հետազոտված ապացույցներով հիմնավորվել է, որ հիշյալ օրը Գոո Մհերի Համբարձումյանը՝ իմբի մյուս անդամների հետ միասին բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ, հայհոյանքներ են հնչեցրել հանրահավաքի մասնակիցների հասցեին, նրանց տեղաշարժը կանխելու նպատակով բռնություն են գործադրել՝ ոտքերով, ձեռքերով հարվածներ են հասցրել երթի մասնակիցներին, այդ թվում Դավիթ Համբարձումյանի հետ բռունցքներով և ոտքերով հարվածներ է հասցրել ցույցի մասնակիցներ ***** **********-ի և ********** **********-ի մարմնի տարբեր մասերին՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով, որից հետո հարվածներ են հասցրել ***** **********-ին, ****** **********-ին, ******* **********-ին և խաղաղ երթի այլ մասնակիցներին: Նույն միջադեպի ժամանակ Գ.Համբարձումյանը ձեռքով հարվածել է **.**********-ին՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք, որն արտահայտվել է աջ աչքի ստորին կոպի արյունազեղման ձևով, որից հետո ոտքով հարվածել է վերջինիս կողմից վարվող «Նիսան» մակնիշի «** ** ***» համարանիշի ավտոմեքենային՝ **.**********-ին պատճառելով 33.000 ՀՀ դրամի նյութական վնաս: Վերոհիշյալ համատեղ գործողությունների արդյունքում վնասվել են Արարատի մարզի Հայանիստ համայնքին պատկանող, ******** **********-ի կողմից վարվող «CHEVROLET AVEO1,2» մակնիշի *** ** ** հաշվառման համարանիշի, *******

*********-ին պատկանող «Վազ 2107» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենաները՝ Հայանիստ համայնքին պատճառելով 110.000 ՀՀ դրամի գույքային վնաս, իսկ **.********-ին՝ 14.000 ՀՀ դրամի գույքային վնաս:*

Նման պայմաններում Դատարանն արձանագրում է, որ Գոռ Մհերի Համբարձումյանի կողմից կատարված արարքի իրավական գնահատականը համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներին, վերջինիս կողմից հանցանք կատարելու ընթացքում չի կատարվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմից որևէ գործողություն, որը կարող էր համընկնել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմի որակյալ հատկանիշներին: (...)

Հիմք ընդունելով վերը շարադրվածը Դատարանն արձանագրում է, որ անհրաժեշտ է Գոռ Մհերի Համբարձումյանին մեղավոր ճանաչել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ առանց պատիժ նշանակելու՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով (...)»[10]:

14. Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով մեղադրողի վերաքննիչ բողոքում նշված փաստարկներին՝ սույն գործով մեղադրյալներ Ա.Մամուլյանին, Կ.Օհանյանին, Ա.Հակոբյանին, Գ.Խաչատրյանին մեղսագրված՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքները հաստատված լինելու վերաբերյալ, արձանագրել է հետևյալը. *«(...) [Շ]արադրված փաստերը գնահատելով վերոհիշյալ իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վերաքննիչ դատարանը ևս արձանագրում է, որ սույն գործում առկա ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ Արմեն Մամուլյանը, Կարեն Օհանյանը, Արմենակ Հակոբյանը և Գոռ Խաչատրյանը կատարել են 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարք: (...) Հետևաբար, դատարանը եկել է*

[10] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 38-րդ, թերթեր 99-123:

իրավաչափ հետևության, գտնելով, որ Արմեն Մամուլյանի, Կարեն Օհանյանի, Արմենակ Հակոբյանի և Գոո Խաչատրյանի նկատմամբ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման և այդ մեղադրանքում նրանք պետք է արդարացվեն՝ մեղսագրվող արարքը նրանց կողմից կատարված չլինելու պատճառաբանությամբ:

Ուսպի մեղադրողի վերաքննիչ բողոքում նշված փաստարկները՝ Արմեն Մամուլյանի, Կարեն Օհանյանի, Արմենակ Հակոբյանի և Գոո Խաչատրյանի կողմից՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքները կատարելը հաստատված լինելու վերաբերյալ, անհիմն են և չեն կարող հիմք հանդիսանալ այդ մասով վիճարկվող դատավճիռը բեկանելու համար: (...)»[11]:

14.1. Վերաքննիչ դատարանը, Դ.Համբարձումյանի և Գ.Համբարձումյանի մասով մասնակիորեն բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և վարույթը համապատասխան մասով նույն դատարան՝ նոր քննության փոխանցելով, արձանագրել է հետևյալը. *«(...) Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ մեղադրյալ Դավիթ Համբարձումյանի մեղքը մի խումբ անձանց հետ դիտավորությամբ կոպիտ կերպով հասարակական կարգը խախտելու, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով և բռնություն գործադրելու և գույքը ոչնչացնելու մեջ, Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել քրեական գործով ձեռք բերված և միմյանց հետ փոխկապակցված մի շարք վերաբերելի ապացույցներով (...):*

Սակայն, Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված խուլիգանության հանցակազմը համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածին: (...)

ՀՀ վճռաբեկ դատարանի (...) որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դավիթ և Գոո Համբարձումյանների արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու համար վճռորոշ նշանակություն ունեն հետևյալ հանգամանքների պարզումը, դրանք

[11] Տե՛ս վարույթի նյութեր հատոր 53-րդ, թերթեր 139-152:

քրեական գործում առկա փոխկապակցված ապացույցների համակցությամբ հաստատված լինելը կամ չլինելը, մասնավորապես.

- Դավիթ Համբարձումյանը նշված դեպքի ընթացքում, արդյոք կրել և օգտագործել է զենք, որը նախատեսված է «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքով, գործադրված զենքի տեսակը (գործով ձեռք բերված վերը նշված ապացույցների հիման վրա հնարավոր չէ միանշանակ եզրահանգման գալ այդ հանգամանքների կապակցությամբ),

- Դավիթ Համբարձումյանը, Գոռ Համբարձումյանը կամ ենթադրյալ խմբի մյուս մասնակիցները մահակները և քարերը մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստել կամ հարմարեցրել են թե ոչ, վերջիններս մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես որոշակի ակտիվ գործողություններ իրականացրել են թե ոչ, դրանց նկատմամբ որևէ ներգործություն իրականացրել են թե ոչ՝ լրիվ կամ մասնակի կառուցվածքային փոփոխության ենթարկում, կարգավորում կամ ձևափոխում, որպեսզի դրանք առավել արդյունավետ կամ հարմար լինեն օգտագործման համար:

Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ վերը նշված հանգամանքները հաստատող կամ հերքող որևէ փաստ Դատարանում հետազոտված վերը նշված ապացույցները չեն պարունակում:

Վերաքննիչ դատարանը հատուկ ընդգծում է, որ Առաջին ատյանի դատարանը ընդհանրապես չի քննարկել նշված հանգամանքերը, դատավարության մասնակիցները հնարավորություն չեն ունեցել դիրքորոշում հայտնել, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում նոր ապացույցներ ներկայացնել Դատարան նշված հանգամանքների վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանը արձանագրում է նաև, որ Առաջին ատյանի դատարանը Դավիթ և Գոռ Համբարձումյաններին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով մեղսագրված արարքները չի համապատասխանեցրել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածին:

Մինչդեռ, ՀՀ գործող քրեական օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումների պայմաններում միայն առարկայի կամ միջոցի գործադրումը դեռևս բավարար չէ արարքն այդ ծանրացնող հանգամանքով որակելու

համար, քանզի բացի գործադրման փաստից, պետք է լինեն նաև փվյալներ հանցավորի կողմից դրանք մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստելու կամ հարմարեցնելու վերաբերյալ:

*Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերը նշված հանգամանքները պարզելուց հետո միայն կարող է ճիշտ իրավական գնահատական տրվել մեղադրյալներ Գոռ և Դավիթ Համբարձումյանների կողմից կատարված վերը նշված արարքներին, իսկ դրանց պարզումը հնարավոր է քրեական գործով տուժողներ՝ **.**********-ի, **.*********-ի, **.**********-ի, **.**********-ի և վկա՝ **.**********-ի հարցաքննությամբ և վերաբերելի առկա և նոր ապացույցների հետազոտմամբ, և փվյալ դեպքում վերաքննիչ վերանայման գործիքակազմը բավարար չէ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ քննությունն ապահովելու և արձանագրված դատական սխալները վերացնելու համար, նկատի ունենալով նաև, որ սույն գործով վարույթի մասնակիցները իրենց բողոքի, ինչպես նաև մյուս կողմի բողոքի կապակցությամբ տրված պատասխանի փաստարկումները հաստատելու համար Վերաքննիչ դատարան չեն ներկայացրել նոր ապացույցներ, չեն միջնորդել ցուցմունք տալու համար դատարան հրավիրել իրենց նշած անձին, նշանակել փորձաքննություն, չեն պահանջել իրենց համար ոչ մատչելի ապացույցներ:*

Այսինքն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով Վերաքննիչ դատարանին վերապահված լիազորությունները և հնարավորությունները բավարար չեն իր կողմից կայացվելիք նոր դատական ակտի իրավաչափությունն ապահովելու համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ ճիշտ չի կիրառվել նյութական և դատավարական օրենքը, որն իր բնույթով էական է, և ազդել է գործի ելքի վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի, դատավճիռը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու հիմք է:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ մեղադրողի և պաշտպանների վերաքննիչ բողոքներում բարձրացված մյուս հարցերին անդրադառնալու իրավական հնարավորությունը բացակայում է: (...)

Ուստի, դատախազի և պաշտպանների կողմից ներկայացված վերաքննիչ բողոքները անհրաժեշտ է բավարարել մասնակի, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2025թ. հոկտեմբերի 23-ի թիվ ԵԴ/0394/01/19 դատավճիռը՝ մասնակի՝ մեղադրյալներ Դավիթ Միերի Համբարձումյանի և Գոռ Միերի Համբարձումյանի մասով պետք է բեկանել և վարույթը այդ մասով փոխանցել նույն դատարան՝ նոր դատաքննության (...)»[12]:

14.2. Վերաքննիչ դատարանի կազմի դատավոր Մ.Կիրակոսյանն իր տարբերվող հատուկ կարծիքում, ի թիվս այլնի, նշել է հետևյալը. *«Վերաքննիչ դատարանի մեծամասնության կողմից մատնանշված հարցերը (...) իրենց բնույթով նախևառաջ նյութաիրավական գնահատման և ապացույցների բավարարության ստուգման հարցեր են: Այդ հարցերը Վերաքննիչ դատարանը կարող էր լուծել իր վերաքննիչ լիազորությունների շրջանակում՝ հիմք ընդունելով առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցները, իսկ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում՝ նաև նոր ապացույցները:*

Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ Վերաքննիչ դատարանի մեծամասնությունն իր որոշմամբ ինքն է արձանագրել, որ Առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցներում առկա չեն այնպիսի տվյալներ, որոնք հաստատում կամ հերքում են Դավիթ Համբարձումյանի կողմից գործադրված առարկայի՝ «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի իմաստով զենք լինելու հանգամանքը կամ Դավիթ Համբարձումյանի, Գոռ Համբարձումյանի կամ խմբի մյուս մասնակիցների կողմից մահակներն ու քարերը մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված լինելու հանգամանքը: Եթե Վերաքննիչ դատարանը հանգել էր այն հետևության, որ այդպիսի տվյալներ առկա չեն, ապա այդ հանգամանքը պետք է գնահատվեր ապացուցվածության չափանիշի, մեղադրանքի ապացուցման բեռի և կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու սկզբունքի համատեքստում, այլ ոչ թե դիտվեր որպես վարույթը նոր դատաքննության փոխանցելու հիմք:

(...) Սույն գործով մեծամասնության դիրքորոշման հետ նաև անհամաձայնությունս այն է, որ, ըստ էության, գործը վերադարձնում է առաջին

[12] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 53-րդ, թերթեր 154-170:

ապյանի դատարան՝ պարզելու այնպիսի հանգամանքներ, որոնց առկայությունը կամ բացակայությունը պետք է բխի մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքներից և արդեն իսկ հետազոտված ապացույցներից: Քրեական դատավարության մեջ դատարանը կաշկանդված է մեղադրանքի փաստական սահմաններով, իսկ վերաքննիչ դատարանը՝ նաև վերաքննիչ բողոքների հիմքերով և հիմնավորումներով: Եթե մեղադրանքի փաստական նկարագրության մեջ կամ ապացուցողական նյութում բավարար հստակությամբ առկա չեն ՀՀ գործող քրեական օրենսգրքի ծանրացնող հատկանիշի համար անհրաժեշտ փաստական տվյալներ, ապա գործը նոր քննության ուղարկելը չի կարող ծառայել այդ բացը լրացնելու նպատակին: Կարծում եմ նման մոտեցումը կարող է վտանգել մեղադրանքի իրավական որոշակիության և արդար դատաքննության երաշխիքները:

Վերաքննիչ դատարանի մեծամասնության կողմից այն փաստարկը, որ Առաջին ատյանի դատարանը Դավիթ և Գոռ Համբարձումյաններին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով մեղսագրված արարքները չեն համապատասխանեցրել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածին, կարծում եմ նույնպես չէր կարող ինքնուրույն հիմք հանդիսանալ դատավճիռը մասնակի բեկանելու և վարույթը նոր դատաքննության փոխանցելու համար: Նման համապատասխանեցումը, իր էությամբ, իրավական վերլուծության և նյութական օրենքի կիրառման հարց է, որի լուծումը վերաքննիչ դատարանի անմիջական պարտականություններից է: (...)

Այս առումով էական է նաև այն, որ Վերաքննիչ դատարանի 2026 թվականի հունիսի 25-ի որոշմամբ բողոքների մյուս հարցերին անդրադարձ չի կատարվել այն պատճառաբանությամբ, որ գործը նոր քննության ուղարկելու պայմաններում այդ հարցերին անդրադառնալու իրավական հնարավորությունը բացակայում է: Սակայն, իմ գնահատմամբ, հենց այդ մոտեցումն է խնդրահարույց: Եթե Վերաքննիչ դատարանն ուներ բավարար գործիքակազմ բողոքներում բարձրացված հարցերին անդրադառնալու համար, ապա նա չէր կարող չքննարկել դրանք՝ նախապատվություն տալով գործը նոր քննության ուղարկելուն:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ սույն գործով առկա չեն եղել այնպիսի դատավարական խոչընդոտներ, որոնք օբյեկտիվորեն բացառում էին Դավիթ Միերի Համբարձումյանի և Գոռո Միերի Համբարձումյանի վերաբերյալ դատավճռի օրինականության և հիմնավորվածության ստուգումը վերաքննիչ վարույթի շրջանակներում: (…)»[13]:

<u>Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

15. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավորված են արդյո՞ք Արմեն Մամուլյանին, Կարեն Օհանյանին, Արմենակ Հակոբյանին և Գոռո Խաչատրյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքներում արդարացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

16. ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ *«2. Զանգվածային անկարգությունների ժամանակ դրանց մասնակցի կողմից բռնություն գործադրելը, ջարդ կամ հրկիզում իրականացնելը, գույք ոչնչացնելը կամ վնասելը, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելը կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելը՝ (…):*

(…)

5. Սույն օրենսգրքում զանգվածային անկարգություններ են համարվում բռնությամբ, ջարդերով, հրկիզումներով, գույք ոչնչացնելով կամ վնասելով, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելով կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով արտահայտված մեկից ավելի անձանց գործողությունները, որոնց հետևանքով վտանգվում է հասարակական անվտանգությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:*

[13] Տե՛ս վարույթի նյութեր հատոր 53-րդ, թերթեր 171-214:

2. Չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղությանը: (...)

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր ողջամիտ կասկածները, որոնք չեն փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք պետք է հաստատվի պատշաճ ապացույցների բավարար համակցությամբ:*

2. Եզրափակիչ դատավարական ակտը պետք է հիմնվի հետազոտված ապացույցների ազատ և բարեխիղճ գնահատման վրա:

3. Մեղադրական դատավճռի հիմքում դրվող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած հիմնավոր կասկած: Դատավճիռ կայացնելիս պետք է հաշվի առնվի անհրաժեշտ և հնարավոր ապացույցների բացակայությունը: (...)»:

Նույն օրենսգրքի 104-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական վարույթի ընթացքում հավաքված ապացույցները ենթակա են պատշաճ ստուգման՝ ստացված ապացույցի ձևի և բովանդակության վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ստացման աղբյուրները վերհանելու միջոցով»:*

Նույն օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, իսկ բոլոր ապացույցների համակցությունը՝ հիմնավոր եզրափակիչ դատավարական ակտ կայացնելու համար բավարարության տեսանկյունից:*

2. Քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով քրեադատավարական օրենսդրությամբ, ներառյալ ապացուցման չափանիշների մասին վերաբերելի կանոններով, ապացույցները գնահատում են դրանց պատշաճ հետազոտման և վերլուծության վրա հիմնված ներքին համոզմամբ (...)»:

16.1. Ապացույցների գնահատման չափանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ դատարանի ներքին համոզմունքը՝ որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն մի կողմից պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Ընդ որում, թեև ապացույցները գնահատվում են ներքին համոզմունքի հիման վրա, այնուամենայնիվ, այն չի կարող կամայական լինել և պետք է բխի գործի հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունից: Այլ կերպ՝ յուրաքանչյուր գործով ապացուցման ենթակա հանգամանքները հաստատելիս (հանցագործության դեպքը և հանգամանքները, կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին, անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ և այլն) դատարանը կրում է առկա ապացույցները բարեխիղճ գնահատման ենթարկելու պարտականություն, ինչն էլ իր հերթին պետք է արտահայտվի պատճառաբանված եզրահանգումների տեսքով[14]:

16.2. Վերահաստատելով և զարգացնելով «ապացույցների բավարարության» հասկացության վերաբերյալ նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները [15] ՝ Վճռաբեկ դատարանն *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով արձանագրել է հետևյալը. *«(…) [Ա]պացույցների բավարարությունը» որոշելու չափանիշներն են.*

1) անմեղության կանխավարկածը,

2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը,

3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը:

---

[14] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի* գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔՐԴ/0632/01/08, *Հմայակ Դավթյանի* գործով 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ՇԴ/0126/01/12 որոշումները:

[15] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի* գործով վերը նշված որոշումը, *Ֆրունզիկ Գալստյանի* գործով 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09, *Միրակ Սաքանյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10, *Մարգար Հակոբյանի* գործով 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԵԿԴ/0168/01/12 որոշումները:

(…) Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: (…) [Դա] ենթադրում է ապացույցների այնպիսի ամբողջության առկայություն, որն անհրաժեշտ է անձի մեղավորությունը ողջամիտ (հիմնավոր) կասկածից վեր ապացուցված համարելու, այլ ոչ թե անձի մեղավորության մասին ենթադրություններ անելու համար: (…)

[Հ]անցանքի մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի վերաբերյալ՝ ապացուցման ենթակա յուրաքանչյուր հանգամանքի կապակցությամբ դատարանի հետևությունը պետք է հիմնված լինի ոչ թե գնահատողական դատողությունների, կանխատեսումների կամ կարծիքների, այլ կոնկրետ գործով օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների վրա: (…) [Մ]եղսագրվող հանցագործության և դրա հատկանիշների ապացուցման բեռը կրում է մեղադրանքի կողմը, իսկ չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի: Դրանից հետևում է, որ մեղադրանքի կողմը կրում է անձի մեղքը հաստատելու համար բավարար ապացույցներ ներկայացնելու պարտականությունը: (…)

(…) [Ք]րեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով՝ պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած»[16]*:*

17. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

[16] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 30-րդ և 33-րդ կետերը:

- Նախաքննության մարմնի կողմից Ա.Մամուլյանին, Կ.Օհանյանին, Ա.Հակոբյանին, Գ.Խաչատրյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի կատարման համար, որ նրանք 2018 թվականի ապրիլի 22-ին Երևան քաղաքի Էրեբունի և Նոր Արեշ 26 փողոցների հատման վայրում քննությամբ դեռևս չպարզված մի խումբ անձանց հետ մասնակցել են անհայտ անձի կողմից կազմակերպած զանգվածային անկարգություններին, որոնք զուգորդվել են բռնությամբ, ջարդերով և գույքի ոչնչացմամբ[17],

- Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ գործում առկա և դատարանում հետազոտված թույլատրելի, վերաբերելի և հավաստի ապացույցների բավարար համակցությամբ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով հնարավոր չէ հետևություն անել Ա.Մամուլյանի, Կ.Օհանյանի, Ա.Հակոբյանի, Գ.Խաչատրյանի կողմից մի խումբ անձանց հետ անհայտ անձի կողմից կազմակերպած՝ բռնությամբ, ջարդերով և գույքի ոչնչացմամբ զուգորդված զանգվածային անկարգություններին մասնակցելու մասին նրանց ներկայացված մեղադրանքի հիմնավորվածության և օրինականության վերաբերյալ, այդ առումով առկա են չփարատված կասկածներ, որոնք պետք է մեկնաբանվեն հօգուտ նրանց[18],

- Վերաքննիչ դատարանը, այս մասով անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, իր հերթին արձանագրել է, որ սույն գործում առկա ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ Ա.Մամուլյանը, Կ.Օհանյանը, Ա.Հակոբյանը և Գ.Խաչատրյանը կատարել են ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարք[19]:

18. Սույն որոշման 16-16.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով նախորդ կետում ներկայացված փաստական հանգամանքները, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ե.Ավագյանի վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական

[17] Տե՛ս սույն որոշման 12.2-րդ կետը:
[18] Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:
[19] Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

հանգամանքների բացահայտման ու քրեական օրենքի կիրառման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության ու գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քրեական գործով ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցներով հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան չի հիմնավորվում այն հանգամանքը, որ Ա.Մամուլյանը, Կ.Օհանյանը, Ա.Հակոբյանը, Գ.Խաչատրյանը մի խումբ անձանց հետ մասնակցել են անհայտ անձի կողմից կազմակերպած՝ բռնությամբ, ջարդերով և գույքի ոչնչացմամբ զուգորդված զանգվածային անկարգություններին, որպիսի պայմաններում, Վճռաբեկ դատարանն այս մասով իր համաձայնությունն է հայտնում ստորադաս դատարանների հետևություններին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի համար ընդունելի են ստորադաս դատարանների հետևություններն առ այն, որ «Էրեբունիում անհայտ անձինք մահակներով բռնություն են կիրառում քաղաքացիների նկատմամբ», «Էրեբունի համայնք՝ հարձակում քաղաքացիների վրա» և «Էրեբունիում դիմակավորված անձինք հարձակվեցին և ծեծեցին ցուցարարներին» վերտառությամբ տեսանյութերում հիշյալ բոլոր անձինք, բացի Արմեն Մամուլյանից, եղել են քողարկված՝ դիմակներով, գլխարկներով, և այդ տեսանյութերում անձին նույնականացնելու համար որևէ օբյեկտիվ հատկանիշ չի դրսևորվում, որպիսի պայմաններում բավարար չեն և արժանահավատության տեսանկյունից խնդրահարույց են դեպքին ոչ ականատես վկաներ ****** *********-ի և ******* *********-ի՝ նշված տեսանյութերը դիտելիս տեսագրություններում երևացող հանցանք կատարած անձանց ճանաչելու մասին հայտարարությունները՝ հաշվի առնելով նաև այն, որ սույն դրվագի վերաբերյալ ստացված տեսանյութերում պատկերված անձինք մեղադրյալների հետ առաջին անգամ «նույնականացվել են» www.aravot.am լրատվական կայքի կողմից, և հիշյալ հրապարակումը լրատվական միջոցում հայտնվելուց հետո են միայն օրաթերթի կողմից նույնականացված անձանց «ճանաչել» նաև վերոնշյալ վկաները:

Ինչ վերաբերում է տեսանյութերի տարբեր հատվածներում երևացող Էրեբունի վարչական շրջանի կոմունալ բաժնի պետ, սույն գործով մեղադրյալ Ա.Մամուլյանին,

ապա Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում ստորադաս դատարանի այն հետևություններին, որ չի հերքվում վերջինիս ցուցմունքն այն մասին, որ նա դեպքի վայրում է եղել իր աշխատանքային պարտականությունները կատարելու նպատակով: Բացի այդ, տեսանյութերի ուսումնասիրությունից հնարավոր չէ միանշանակ պնդել, որ Ա.Մամուլյանը հարվածում է տուժող ******** **********-ին, որպիսի պայմաններում չեն հաստատվում նրան առաջադրված մեղադրանքում նկարագրված գործողությունները:

19. Այսպիսով՝ սույն վարույթի նյութերի ուսումնասիրության և ստորադաս դատարանների դատական ակտերում շարադրված պատճառաբանությունների և հիմնավորումների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված մեղադրյալների մասով Առաջին ատյանի դատարանի դատավճիռն անփոփոխ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված են, իսկ բողոքաբերի ներկայացրած փաստարկները բավարար չեն արձանագրելու ստորադաս դատարանների կողմից նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումների առկայություն, որոնք կարող էին հիմք հանդիսանալ դատական ակտը համապատասխան մասով բեկանելու համար: Ուստի Վճռաբեկ դատարանը հիմքեր չունի չհամաձայնելու նշված մեղադրյալների վերաբերյալ ստորադաս դատարանների արտահայտած իրավական դիրքորոշումներին և գտնում է, որ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ե.Ավագյանի վճռաբեկ բողոքը նշված մասով բավարարելու, և բողոքարկված դատական ակտերը համապատասխան մասով բեկանելու հիմքեր առկա չեն:

20. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արմեն Մամուլյանին, Կարեն Օհանյանին, Արմենակ Հակոբյանին և Գոռ Խաչատրյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքներում արդարացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված են:

21. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է՝ իրավաչափ և հիմնավոր են արդյո՞ք Դավիթ Համբարձումյանի և Գոռ Համբարձումյանի մասով Առաջին ատյանի դատարանի

դատավճիռը բեկանելու և վարույթը նույն դատարան՝ նոր քննության փոխանցելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

22. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«(…) Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: (…)»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև Եվրոպական կոնվենցիայի) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն *«Յուրաքանչյուր ոք (…) ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (…)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 367-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև նոր ապացույցներով:*

2. Վերաքննության կարգով բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստական հանգամանքներն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ հետևյալ դեպքերի.

1) բողոքում վիճարկվում է որևէ փաստական հանգամանք, և վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ տվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ հետևության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել.

2) բողոքում վիճարկվում է որևէ փաստական հանգամանք, և նոր ապացույցներով վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ տվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ առաջին ատյանի դատարանի հետևությունը հիմնավոր չէ.

(…)

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում վերաքննիչ դատարանն իրավասու է հաստատված համարելու նոր փաստական հանգամանք կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքը, եթե առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված

ապացույցների հիման վրա կամ նոր ապացույցներով հնարավոր է հանգել նման եզրակացության:

4. Եթե առաջին ատյանի դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա դատական ակտում եզրակացության չի հանգել որևէ փաստական հանգամանքի վերաբերյալ, որը պարտավոր էր անել, ապա վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանք, եթե առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա կամ նոր ապացույցներով հնարավոր է հանգել նման եզրակացության:

5. Դատական ակտ կայացնելիս վերաքննիչ դատարանն իրավասու է իր դատական ակտը հիմնավորելու համար հիմնվելու վերաքննիչ դատարանի նիստում չհետազոտված, սակայն առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցների վրա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Ուսումնասիրված քրեական գործը դատարանի որոշմամբ նշանակվում է դատաքննության, որով՝*

(...)

2) ապացույցներ հետազոտելու անհրաժեշտության դեպքում սահմանվում են դատական նիստում անմիջականորեն հետազոտման ենթակա ապացույցների ծավալը, ցուցմունք տալու համար դատարան հրավիրվող անձանց ցանկը. (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 369-րդ հոդվածի համաձայն՝ *«3. Ապացույցների հետազոտման անհրաժեշտության դեպքում այն կատարվում է դատաքննություն նշանակելու մասին որոշմամբ դատարանի սահմանած ծավալով: Կողմի միջնորդությամբ դատարանը կարող է ընդլայնել այդ ծավալը՝ հետազոտելով նաև այլ ապացույցներ, այդ թվում՝ նոր:*

4. Ապացույցների հետազոտումն ավարտելուց հետո, իսկ եթե ապացույցների հետազոտում չի կատարվել, ապա կողմերի բացատրությունները լսելուց հետո դատարանը կողմերին հարցնում է, թե արդյոք նրանք միջնորդում են լրացնել հետազոտման ենթակա ապացույցների ծավալը, և այդ միջնորդությունները լուծելուց հետո անցնում է եզրափակիչ ելույթներին: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն՝ *«Վերաքննության արդյունքով վերաքննիչ դատարանը՝*

1. դատական ակտը թողնում է անփոփոխ: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն գտնում է, որ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ մասնակի սխալ է հիմնավորված, ապա հիմնավորում է անփոփոխ թողնված դատական ակտը.

2. ամբողջությամբ կամ որոշակի մասով բեկանում է դատական ակտը: Բեկանված մասով կայացնում է նոր դատական ակտ կամ վարույթը փոխանցում է առաջին ատյանի համապատասխան դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը.

3. փոփոխում է ստորադաս դատարանի դատական ակտը, եթե փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից.

4. Դատական ակտը բեկանելիս վերաքննիչ դատարանն իրավասու է վարույթը փոխանցելու առաջին ատյանի դատարան միայն այն դեպքում, երբ սույն օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունները և հնարավորությունները բավարար չեն իր կողմից կայացվելիք նոր դատական ակտի իրավաչափությունն ապահովելու համար»:

Նույն օրենսգրքի 373-րդ հոդվածի համաձայն՝ «*Պարզելով, որ փաստական հանգամանքների մասին առաջին ատյանի դատարանի դատական ակտում շարադրված՝ դատարանի հետևությունները չեն համապատասխանում առաջին ատյանի դատարանում կամ վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին, վերաքննիչ դատարանն ամբողջությամբ կամ որոշակի մասով բեկանում է դատական ակտը՝ կայացնելով նոր դատական ակտ կամ վարույթը փոխանցելով առաջին ատյանի դատարան՝ նոր դատաքննության, կամ փոփոխում է դատական ակտը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Պարզելով, որ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի այլ էական խախտում, վերաքննիչ դատարանը*

փոփոխում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը կամ բեկանում է այն՝ վարույթը փոխանցելով առաջին ատյանի դատարան՝ նոր դատաքննության»:

23. Վերոշարադրյալ քրեադատավարական նորմերի վերլուծությունից բխում է, որ Վերաքննիչ դատարանը, պարզելով, որ փաստական հանգամանքների մասին առաջին ատյանի դատարանի դատական ակտում շարադրված՝ դատարանի հետևությունները չեն համապատասխանում առաջին ատյանի դատարանում կամ վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին, ամբողջությամբ կամ որոշակի մասով բեկանում է դատական ակտը՝ կայացնելով նոր դատական ակտ կամ վարույթը փոխանցելով առաջին ատյանի դատարան՝ նոր դատաքննության, կամ փոփոխում է դատական ակտը:

Վերաքննության արդյունքում բողոքարկվող դատական ակտը բեկանելուց հետո վարույթը նոր քննության փոխանցելու լիազորության իրացման պայմանների առնչությամբ Վճռաբեկ դատարանը կայուն իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ վերաքննիչ դատարանի կողմից տվյալ լիազորությունը ենթակա է իրացման այն դեպքերում, երբ վերաքննության գործառութային առանձնահատկություններով պայմանավորված՝ վերաքննիչ վերանայման գործիքակազմը բավարար չէ արձանագրված նյութական կամ դատավարական իրավունքի խախտումները վերացնելու համար, և առաջին ատյանի դատարանում գործի նոր քննությունն անհրաժեշտ է կայացվելիք դատական ակտի արդարացիությունը և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքն ապահովելու առումով: Ընդ որում, բոլոր այն դեպքերում, երբ վերաքննության գործառութային առանձնահատկությունները թույլ են տալիս լուծել նշված խնդիրները, վերաքննիչ դատարանի որոշումը, որպես կանոն, պետք է լինի նոր դատական ակտի կայացումը կամ դատական ակտի փոփոխումը՝ ելնելով դատավարական խնայողության և արդարադատության արդյունավետության շահից, բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված՝ վարույթը նոր քննության փոխանցելու պարտադիր դեպքերի[20]:

[20] Տե'ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Հենրիկ Բարսեղյանի և Արման Մարջանյանի* գործով 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԿԴ/0259/01/16 որոշումը, ինչպես նաև *Ավետիք Չալաբյանի* գործով 2025 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ԵԴ/1174/01/22 որոշումը:

23.1. Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ կրկնում է, որ վերաքննիչ դատարանին թույլ տրված դատական սխալներն ուղղելու և նոր դատական ակտ կայացնելու լիազորություն վերապահելը սերտորեն փոխկապակցված է վերաքննության կարգով դատաքննության առանձնահատկությունների, այն է՝ վերաքննիչ դատարանի նիստում չհետազոտված, սակայն առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցների վրա հիմնվելու կամ գործում եղած կամ նոր ներկայացված ապացույցները հետազոտելու և գործի փաստական կողմը վերանայելու օրենսդրական հնարավորության հետ:

Բացի այդ, հարկ է նկատել, որ վերաքննիչ դատարանի կողմից նոր դատական ակտ կայացնելու կամ առաջին ատյանի դատարանի կայացրած դատական ակտը փոփոխելու լիազորության նախատեսումը կոչված է նաև բացառելու դատական շրջապտույտը, այն բխում է դատավարական խնայողության և արդարադատության արդյունավետության շահից՝ այնքանով, որքանով երաշխավորում է արդար դատաքննության իրավունքի կարևորագույն տարրերից մեկի՝ ողջամիտ ժամկետում գործի քննության հիմնարար պահանջի իրացումը[21]:

24. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ

- Նախաքննության մարմնի կողմից Դ.Համբարձումյանին և Գ.Համբարձումյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով[22],

- Առաջին ատյանի դատարանը, հիմնական դատալսումների ընթացքում պատշաճ իրավական ընթացակարգով հետազոտված թույլատրելի ապացույցների հիման վրա, դրանց ձևի և բովանդակության վերլուծության, այլ ապացույցների հետ համադրելու միջոցով, գնահատելով դրանք վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, իսկ բոլոր ապացույցների համակցությունը՝ հիմնավոր եզրափակիչ դատավարական ակտ կայացնելու համար բավարարության տեսանկյունից, դրանց պատշաճ հետազոտման և վերլուծության վրա հիմնված ներքին համոզմամբ, մեղադրյալների մեղավորության վերաբերյալ չփարատվող բոլոր ողջամիտ կասկածները նրանց օգտին մեկնաբանելով, հաստատված է

[21] Տե՛ս, Վճռաբեկ դատարանի՝ *Ավետիք Չալաբյանի* գործով վերը վկայակոչված որոշումը:
[22] Տե՛ս սույն որոշման 12 և 12.1-րդ կետերը:

համարել Դ.Համբարձումյանի մեղավորությունը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ, իսկ Գ.Համբարձումյանի արարքը որակել է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով[23],

- Վերաքննիչ դատարանը, ըստ էության արձանագրելով, որ Առաջին ատյանի դատարանը Դ.Համբարձումյանի մեղքը՝ մի խումբ անձանց հետ դիտավորությամբ կոպիտ կերպով հասարակական կարգը խախտելու մեջ, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով և զուգորդվել բռնություն գործադրելով և գույք ոչնչացնելով, հաստատված է համարել քրեական գործով ձեռք բերված և միմյանց հետ փոխկապակցված մի շարք վերաբերելի ապացույցներով, միաժամանակ արձանագրել է, որ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված խուլիգանության հանցակազմը չի համապատասխանեցվել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածին: Վերոգրյալի հետ մեկտեղ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Դավիթ և Գոռ Համբարձումյանների արարքներին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու համար վճռորոշ նշանակություն ունի այն հանգամանքների պարզումը, թե արդյո՞ք Դ.Համբարձումյանը նշված դեպքի ընթացքում կրել և օգտագործել է զենք, որը նախատեսված է «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքով, գործադրված զենքի տեսակը, որոնց վերաբերյալ գործով ձեռք բերված ապացույցների հիման վրա հնարավոր չէ միանշանակ եզրահանգման գալ, արդյո՞ք Դավիթ և Գոռ Համբարձումյանները կամ ենթադրյալ խմբի մյուս մասնակիցները մահակներն ու քարերը նախապես պատրաստել կամ հարմարեցրել են մարմնական վնասվածք պատճառելու համար, արդյո՞ք այդ նպատակով կատարել են դրանց կառուցվածքային փոփոխմանը, կարգավորմանը կամ ձևափոխմանն ուղղված գործողություններ, որպիսի հանգամանքները հաստատող կամ հերքող որևէ տվյալ հետազոտված ապացույցները չեն պարունակում, իսկ Առաջին ատյանի դատարանն այդ հանգամանքները չի քննարկել, դատավարության մասնակիցները դրանց վերաբերյալ դիրքորոշում հայտնելու և, անհրաժեշտության դեպքում նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորություն չեն ունեցել: Միևնույն ժամանակ,

[23] Տե՛ս սույն որոշման 13.2-րդ կետը:

Վերաքննիչ դատարանը նշել է, որ նշված հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ է կրկին հարցաքննել տուժողներ **.**********-ին, **.*********-ին, **.**********-ին, **.*********-ին և վկա **.********-ին, ինչպես նաև հետազոտել վերաբերելի առկա և նոր ապացույցները, որպիսի պայմաններում վերաքննիչ վերանայման գործիքակազմը բավարար չէ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ապահովելու համար՝ հաշվի առնելով նաև, որ վարույթի մասնակիցները Վերաքննիչ դատարան նոր ապացույցներ չեն ներկայացրել, անձանց հարցաքննելու, փորձաքննություն նշանակելու կամ իրենց համար ոչ մատչելի ապացույցներ պահանջելու միջնորդություններ չեն հարուցել:

Վերոգրյալ հիմնավորումներով Վերաքննիչ դատարանը փաստել է թույլ տրված դատական սխալներն ուղղելու իր լիազորությունների և հնարավորությունների անբավարարությունը, և Դավիթ ու Գոռո Համբարձումյանների մասով բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, վարույթն այդ մասով փոխանցել է նոր քննության[24]:

25. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելիս Վճռաբեկ դատարանը նախևառաջ հարկ է համարում սույն որոշման 22-23.1-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալ Վերաքննիչ դատարանի կողմից Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու և վարույթը նույն դատարան՝ նոր քննության փոխանցելու հիմնավորումների իրավաչափությանը:

Այսպես՝ Վերաքննիչ դատարանը, փաստելով Դ.Համբարձումյանի կողմից զենք կրելու և գործադրելու, ինչպես նաև գործադրված զենքի տեսակի վերաբերյալ միանշանակ հետևության հանգելու հնարավորության բացակայությունը, ըստ էության արձանագրել է գործով ձեռք բերված ապացույցների գնահատման արդյունքում համապատասխան փաստական հանգամանքների ապացուցվածությունը հաստատելու կամ հերքելու անհնարինություն: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը որևէ հիմնավորում չի ներկայացրել, թե ի՞նչն էր խոչընդոտում և ինչու՞ չէր կարող այդ հանգամանքների ապացուցվածության վերաբերյալ վերջնական հետևության հանգել՝ հիմնվելով Առաջին ատյանի

[24] Տե՛ս սույն որոշման 14.1-րդ կետը:

դատարանում հետազոտված ապացույցների՝ տուժողների և վկաների ցուցմունքների, դեպքին առնչվող տեսագրությունների և փորձագիտական եզրակացությունների վրա: Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ վարույթի մասնակիցները նոր ապացույցներ կամ իրենց համար ոչ մատչելի ապացույցներ պահանջելու միջնորդություններ չեն ներկայացրել, գտել է, որ նոր քննության ընթացքում պետք է հետազոտել վերաբերելի առկա և նոր ապացույցներ՝ դրանով իսկ վերացական, մտացածին պատճառաբանություններով դուրս գալով վերաքննիչ բողոքների սահմաններից: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը չի մատնանշել այնպիսի կոնկրետ ապացույց կամ ապացուցողական գործողություն, որի ձեռքբերումը կամ կատարումն անհրաժեշտ էր նշված հանգամանքները պարզելու համար, սակայն հնարավոր չէր վերաքննության կարգով դատաքննության շրջանակում: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 367-369-րդ հոդվածներով նախատեսված կարգավորումները հնարավորություն են ընձեռում ոչ միայն հիմնվելու առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցների վրա, այլև վկայակոչված ապացույցներն անհրաժեշտության դեպքում անմիջականորեն հետազոտելու և դրանց համադրված գնահատման արդյունքում հանգելու համապատասխան հետևության: Հետևաբար, ընդունելի չէ և անհիմն է վկայակոչված հանգամանքների վերաբերյալ միանշանակ հետևության հանգելու համար վերաքննիչ վերանայման գործիքակազմի անբավարարության մասին Վերաքննիչ դատարանի եզրահանգումը:

26. Անդրադառնալով տուժողներ **.**********-ին, **.**********-ին, **.**********-ին, **.*********-ին և վկա **.**********-ին կրկին հարցաքննելու անհրաժեշտության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դիտարկումներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախ՝ նշված անձինք մանրամասն հարցաքննվել են ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում, և նրանց հարցաքննությունների համապատասխան արձանագրություններն առկա են վարույթի նյութերում: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը չի հիմնավորել, թե ինչո՞վ է պայմանավորված եղել նշված ապացույցների գնահատման անհնարինությունը նաև Վերաքննիչ դատարանի կողմից, ո՞ր փաստական

տվյալներն են, որոնք մնացել են չպարզաբանված և կարող էին լրացվել նշված անձանց լրացուցիչ հարցաքննությամբ:

Ընդ որում, հարկ է արձանագրել, որ վերաքննության կարգով դատաքննության առանձնահատկություններից ելնելով՝ Վերաքննիչ դատարանն ինքը զրկված չէր վերոնշյալ անձանց հարցաքննելու հնարավորությունից՝ քրեադատավարական օրենքով սահմանված պայմանների պահպանմամբ, եթե նման գործողությունների կատարման անհրաժեշտությունը հիմնավորված էր համարում:

Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում նաև Վերաքննիչ դատարանի այն դատողությունը, որ Առաջին ատյանի դատարանը վերոնշյալ հանգամանքները չի քննարկել, դատավարության մասնակիցները դրանց վերաբերյալ դիրքորոշում հայտնելու և նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորություն չեն ունեցել: Առաջին ատյանի դատարանի կողմից վերոհիշյալ բոլոր ապացույցները գնահատվել են վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության չափանիշներով, կողմերը մեղադրանքի հիմնավորվածության վերաբերյալ ներկայացրել են իրենց դիրքորոշումները և վարույթի նյութերում առկա չէ որևէ փաստական տվյալ, որը կհիմնավորեր Վերաքննիչ դատարանի այն պնդումը, որ դատավարության որևէ մասնակից զրկված է եղել նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից, նման փաստարկ չեն ներկայացրել նաև վարույթի մասնակիցներն իրենց վերաքննիչ բողոքներում:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանն արդեն իսկ հարցաքննված անձանց կրկին հարցաքննելու անհրաժեշտությունը վկայակոչելով՝ առանց բովանդակային հիմնավորման, ինչպես նաև լիարժեք հնարավորություն ունենալով իր լիազորությունների շրջանակներում այդ գործողությունն իրականացնելու վերաքննության ընթացքում, գնահատելու համապատասխան ապացույցները, պարզելու դրանցով հաստատվող կամ հերքվող փաստական հանգամանքները և ներկայացված վերաքննիչ բողոքների հիմքերի ու հիմնավորումների սահմաններում հանգելու վերջնական հետևության, ոչ իրավաչափորեն վարույթը փոխանցել է առաջին ատյանի դատարան՝ նոր քննության՝ թույլ տալով անհարկի դատական շրջապտույտ:

26.1. Անդրադառնալով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված արարքները ՀՀ գործող քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածին համապատասխանեցնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դիտարկումներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նյութական օրենքի ճիշտ ընտրությունը, մեղսագրված արարքի քրեաիրավական որակման ստուգումը և մեղադրյալի համար առավել բարենպաստ քրեական օրենքի կիրառելիության հարցի լուծումը վերաքննիչ վերանայման շրջանակում դատարանի կողմից իրականացվող իրավական գնահատման բաղկացուցիչ մաս է: Հետևաբար, նշված դատողությունը ևս բավարար չէր վարույթը նոր քննության փոխանցելու անհրաժեշտությունը հիմնավորելու համար: Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ չի մատնանշել այնպիսի դատավարական խոչընդոտ, որը կբացառեր հիշյալ իրավական հարցի լուծումն անմիջականորեն վերաքննության շրջանակում: Այս պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում նաև նյութական օրենքի համապատասխանեցման անհրաժեշտությունը՝ որպես վարույթն Առաջին ատյանի դատարան նոր քննության փոխանցելու ինքնուրույն հիմնավորում դիտարկելը:

Նույնը վերաբերում է նաև դեպքի ժամանակ ենթադրաբար գործադրված մահակներն ու քարերը ՀՀ գործող քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումների պայմաններում մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված լինելու հանգամանքը պարզելու անհրաժեշտության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դատողություններին: Վերաքննիչ դատարանը չի հիմնավորել, թե ինչու՞ այդ հանգամանքը չէր կարող գնահատել՝ առանց վարույթն Առաջին ատյանի դատարան նոր քննության փոխանցելու:

27. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ թեև վարույթի տևողությունն ինքնին չի բացառում դատական ակտը բեկանելու և վարույթը նոր քննության փոխանցելու հնարավորությունը, սակայն այդպիսի դատավարական լուծում ընտրելիս դատարանը պարտավոր է հաշվի առնել ողջամիտ ժամկետում գործի քննության, դատավարական խնայողության և արդարադատության արդյունավետության շահը:

Այս առումով Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ վարույթը նոր քննության փոխանցելու լիազորության իրացումը պետք է պայմանավորված լինի ոչ թե ցանկացած թերությամբ կամ ապացույցների գնահատման անհրաժեշտությամբ, այլ վերաքննիչ վերանայման գործիքակազմի օբյեկտիվ անբավարարությամբ՝ արձանագրված հնարավոր խախտումները վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու կամ դատական ակտը փոփոխելու համար:

Տվյալ դեպքում սույն վարույթը հարուցվել է դեռևս 2018 թվականին և գործի քննությունը շարունակվում է ավելի, քան ութ տարի, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի կողմից վերոգրյալ անհիմն դատողություններով վարույթը նոր քննության փոխանցելու արդյունքում լրջորեն վտանգվում է նաև գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջը:

28. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից Դավիթ և Գոռ Համբարձումյանների մասով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելը և վարույթը նույն դատարան նոր քննության փոխանցելն իրավաչափ չէր:

29. Վերոգրյալի հաշվառմամբ, ինչպես նաև ելնելով արդարադատության շահի պաշտպանության և վարույթի արդարացիության ապահովման՝ ողջամիտ ժամկետում գործի քննության անհրաժեշտությունից, Վճռաբեկ դատարանը, դատախազի և պաշտպանության կողմի ներկայացրած բողոքների հիմքերի և հիմնավորումների սահմաններում հարկ է համարում անդրադառնալ նաև Վերաքննիչ դատարանի կողմից Դավիթ և Գոռ Համբարձումյանների մասով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու և ըստ այդմ՝ վերջիններիս առաջադրված մեղադրանքների հիմնավորվածությանը:

Այսպես՝ ՀՀ նախկին քրեական օրենսգքրի 258-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Խուլիգանությունը՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով՝ (...):*

2. Նույն արարքը, որը զուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով՝ (...):

3. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից, (…):

4. Սույն հոդվածի երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից յոթ տարի ժամկետով»:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Խուլիգանությունը՝ հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելը, որը դրսևորվել է անձին ապորացնելով կամ հայհոյանքներով կամ անպարկեշտ արտահայտություններով կամ համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ մարդկանց անդորրը խախտելով կամ նույն եղանակներով հանրային միջոցառումը, արարողությունը խափանելով կամ հասարակական նշանակության օբյեկտի, հիմնարկի կամ կազմակերպության բնականոն աշխատանքը խոչընդոտելով՝ (…):*

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից, (…):

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով»:

30. Վճռաբեկ դատարանը խուլիգանության հանցակազմի մեկնաբանման շրջանակներում ձևավորած [25] իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, վերլուծելով սույն գործով ձեռք բերված և դատարանում հետազոտված, ի թիվս այլնի, սույն որոշման 13.1-րդ կետում շարադրված ապացույցները, իր համաձայնությունն է հայտնում ստորադաս դատարանի այն հետևությանը, որ Դավիթ և Գոռ Համբարձումյանների մեղքը մի խումբ անձանց հետ դիտավորությամբ կոպիտ

[25] Տե՛ս Վճռաբեկ դատարանի, ի թիվս այլնի, *Շահեն Հախվերդյանի* գործով 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՎԴ/0014/01/11, *Ազատ Խլղաթյանի և Աշոտ Աթաբեկյանի* գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՏԴ/0085/01/14 որոշումները:

կերպով հասարակական կարգը խախտելու, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով, բռնություն գործադրելու և գույքը ոչնչացնելու մեջ, հաստատված է քրեական գործով ձեռք բերված և միմյանց հետ փոխկապակցված մի շարք վերաբերելի և թույլատրելի ապացույցներով, մասնավորապես, ի թիվս այլնի՝ տուժողներ ********* **********-ի, ****** **********-ի, ****** *********-ի, ****** **********-ի, ********** **********-ի, ********* **********-ի, ինչպես նաև վկաներ ******* **********-ի, ******* *********-ի, ******* **********-ի և այլ անձանց ցուցմունքներով, դեպքի վերաբերյալ «Հովտաշատից հանրապետության հրապարակ», «Օդանավակայանից Մասիս» և «Hayainst Krakot» վերտառությամբ տեսանյութերով, դրանց զննության արձանագրություններով, դատաբժշկական, դատաձգաբանական, դատաքիմիական, դատաապրանքագիտական և դատահետքաբանական փորձաքննությունների եզրակացություններով:

Այս համատեքստում անդրադառնալով սույն գործով էական նշանակության տեղեկություններ հայտնած անձանց՝ վկա ******* **********-ի, տուժողներ ******** **********-ի, **** **********-ի, ******** *********-ի և ********** *********-ի ցուցմունքների արժանահավատությունը գնահատելիս Առաջին ատյանի դատարանի կողմից վերջիններիս դատաքննական ցուցմունքները՝ նրանց նկատմամբ հնարավոր ազդեցություն գործադրվելու հանգամանքով պայմանավորված կասկածի տակ դնելու և ըստ այդմ՝ նախաքննական սկզբնական ցուցմունքներն արժանահավատ դիտելու կապակցությամբ պաշտպանության կողմի բարձրացրած փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանը դրանք անհիմն է համարում և գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, մանրամասն վերլուծելով վերոնշյալ անձանց ցուցմունքներում առկա հակասությունները, այդ ապացույցների ձևավորման ողջ ընթացքը, դրանց բովանդակությունը հաստատող կամ հերքող հանգամանքների առկայությունը, ցուցմունքների փոփոխության հնարավոր պատճառներն ու դրանց վրա ազդող գործոնները, ցուցմունքները փոխելիս որևէ ողջամիտ բացատրություն չներկայացնելը, ինչպես նաև այդպիսիք համադրելով գործում առկա մյուս ապացույցների հետ, իրավաչափ և փաստարկված հետևության է եկել վերջիններիս ցուցմունքների արժանահավատության գնահատման հարցում: Մասնավորապես,

Վճռաբեկ դատարանի համար համոզիչ, փաստարկված և ընդունելի են վերոնշյալ անձանց կողմից իրենց ցուցմունքները հնարավոր ազդեցության գործադրման կամ այդպիսի մտավախություն ունենալու հանգամանքով պայմանավորված փոխելու վերաբերյալ ստորադաս դատարանի դատողությունները՝ հաշվի առնելով նաև, որ դեռևս նախաքննության փուլում տուժողներ **.**********-ը և **.**********-ը վարույթն իրականացնող մարմնին նույնաբովանդակ դիմումներ են ուղղել, ինչպես նաև լրացուցիչ ցուցմունքներ տվել այն մասին, որ պնդում են իրենց ցուցմունքները Դավիթ և Գոռ Համբարձումյանների մասով, սակայն չեն ցանկանում առերեսվել նրանց, քանի որ նրանք հեղինակություն են, Դավիթը քաղաքապետ է, ուստի մտահոգություն ունեն իրենց և իրենց ընտանիքների անվտանգության համար[26]: Այս առումով հատկանշական է նաև, որ տուժող ********** **********-ը ևս, ով թե՛ նախաքննության և թե՛ դատաքննության ընթացքում պնդել է Գ.Համբարձումյանի դեմ իր ցուցմունքը, նախաքննության ընթացքում դիմում է հասցեագրել վարույթն իրականցնող մարմնին և լրացուցիչ ցուցմունք տվել այն մասին, որ Մասիսի քաղաքապետ Դ.Համբարձումյանը և նրա եղբայրն իր հարազատների միջոցով խնդրում են, որ փոխի ցուցմունքը և հայտնի, որ իրեն և իր մեքենային վնասվածքներ պատճառած անձը Գ.Համբարձումյանը չի եղել[27]:

30.1. Անդրադառնալով պաշտպան Գ.Պապոյանի՝ Առաջին ատյանի դատարանի կողմից պատճառաբանական մասում տուժողներ **.**********-ի և **.********-ի ցուցմունքների մասով փաստական անճշտություններ թույլ տված լինելու վերաբերյալ փաստարկին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք որևէ կերպ չեն նսեմացնում Առաջին ատյանի դատարանի իրավաչափ վերլուծությունները և չեն ազդում դրանց հիմնավորվածության վրա:

---

[26] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 10-րդ, թերթեր 211-216:

[27] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 12-րդ, թերթեր 220, 222: Վճռաբեկ դատարանը մեղադրյալի անձով պայմանավորված վերոնշյալ մտահոգությունները ողջամիտ է համարել դեռևս մինչդատական վարույթում Դ.Համբարձումյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի քննարկման ժամանակ. մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Դավիթ Համբարձումյանի* գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԴ/0700/06/18 որոշումը: Միևնույն ժամանակ, անձանց նախաքննական ցուցմունքներին նախապատվություն տալու չափանիշների վերաբերյալ տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Մակեյանը և այլք ընդդեմ Հայաստանի* գործով 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ46435/09:

Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի կողմից տուժողներ **.**********- և **.*********-ի ընտանիքի անդամներին չհարցաքննելու վերաբերյալ բողոքաբեր Գ.Պապոյանի փաստարկին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախ՝ պաշտպանության կողմը նման միջնորդությամբ հանդես չի եկել, իսկ Առաջին ատյանի դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ այդ անձանց չհարցաքննելը կասկածի տակ չի դրել և չէր կարող դնել վարույթի արդարացիությունը: Այս առումով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ տուժողներ **.**********-ի և **.**********-ի հետագա ցուցմունքներն այն մասով, որ իրենք Դավիթ և Գոռ Համբարձումյանների կողմից իրենց նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ տեղեկությունները լսել են այլ անձանցից, արդեն իսկ անարժանահավատ են դիտարկվել, ավելին՝ տվյալ դեպքում էական նշանակություն են ստանում ոչ թե վերջիններիս փոխված ցուցմունքների հիման վրա նրանց ընտանիքի անդամների տված ցուցմունքները, այլ դեպքի օրը՝ դեպքից անմիջապես հետո Դավիթ և Գոռ Համբարձումյանների գործողությունների մասով վերջիններիս կողմից տուժող ******* *********-ին, վկաներ ******** և ******* **********-ին, և Հանրապետության հրապարակում **.**********-ի և **.*********-ի կողմից լրատվամիջոցներին պատմելու վերաբերյալ վերոնշյալ անձանց ցուցմունքները, համապատասխան հարցազրույցը պարունակող տեսանյութն ու դրա զննության արձանագրությունը, որոնցով ևս հաստատվում է տուժողներ **.**********-ի և **.********-ի նախաքննական սկզբնական ցուցմունքների արժանահավատությունը:

30.2. Ինչ վերաբերում է դեպքի վայրում գտնված ոստիկանների ցուցմունքներին այն մասին, որ վերջիններս չեն տեսել Դավիթ և Գոռ Համբարձումյաններին հակաօրինական գործողություններ կատարելիս, Դ.Համբարձումյանի կողմից վիճաբանությունը հանդարտեցնելու մասին գործում առկա որոշակի տեղեկություններին և տուժող **.**********-ի ներկայացրած՝ 2018 թվականի ապրիլի 22-ի դեպքերն արտացոլող տեսագրությանը՝ պաշտպանության կողմի պնդմամբ որպես Դ.Համբարձումյանին առաջադրված մեղադրանքը հերքող առանցքային ապացույցների, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախ՝ ըստ վկաների և տուժողների ցուցմունքների՝ քննարկվող միջադեպը տևել է առնվազն 30 րոպե, իսկ նշված տեսագրությունը 1 րոպե 31 վայրկյան տևողության է, հետևաբար

այն չէր կարող արտացոլել իրադարձությունների ամբողջ ընթացքը և մեղադրանքը հերքող ապացույց հանդիսանալ՝ հաշվի առնելով նաև մեղադրյալ Դ.Համբարձումյանի դատաքննական ցուցմունքն այն մասին, որ ինքը դեպքի վայրում գտնվել է մոտ կես ժամ: Ինչ վերաբերում է ոստիկանների ցուցմունքներին և գործում առկա այն տվյալներին, որ Դ.Համբարձումյանը հանդարտեցնում էր իրավիճակը, ապա դրանք ևս չեն բացառում նախքան ոստիկանների կողմից ահազանգի հիման վրա դեպքի վայր հասնելը Դ.Համբարձումյանի կողմից հակաօրինական գործողություններ կատարելը՝ հաշվի առնելով նաև գործում առկա ցուցմունքներն այն մասին, որ միջադեպի ավարտից հետո Դ.Համբարձումյանն սկսել է խոսել ցուցարարների հետ՝ խոստանալով, որ եթե Արգավանդով չգնան Երևան, 20 րոպեից ոստիկանների կողմից բերման ենթարկված բոլոր անձինք բաց կթողնվեն:

30.3. Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ձեռք բերված և դատարանում հետազոտված ապացույցներով հաստատված է Դավիթ և Գոռ Համբարձումյանների մեղքը մի խումբ անձանց հետ դիտավորությամբ կոպիտ կերպով հասարակական կարգը խախտելու մեջ, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով, և զուգորդվել բռնություն գործադրելով և գույք ոչնչացնելով, իսկ պաշտպանության կողմի ներկայացրած փաստարկներն անհիմն են և չեն կարող ընդունելի համարվել:

31. Վերոգրյալի հետ մեկտեղ անդրադառնալով Դավիթ և Գոռ Համբարձումյանների արարքում ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ծանրացնող հանգամանքի, այն է՝ խուլիգանությունը զենքի և որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ կատարելուն, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը:

Այսպես՝ Դավիթ և Գոռ Համբարձումյաններին մեղադրանք է առաջադրվել 2018 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը 16:00-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում, Արարատի մարզի Հայանիստ-Հովտաշատ գյուղերի խաչմերուկի բանուկ հատվածում մի խումբ անձանց հետ դիտավորությամբ կոպիտ կերպով հասարակական կարգը խախտելու համար, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով և զուգորդվել նույն օրը՝ ժամը 19:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում կայանալիք հանրահավաքին

մասնակցելու նպատակով դեպի նշված հրապարակ երթ կազմակերպած մասնակիցների նկատմամբ նախապես իրենց հետ վերցված **զենքի և որպես զենք հանդիսացող առարկաների գործադրմամբ բռնություն գործադրելով և գույքը ոչնչացնելով**[28]**:**

Վերոգրյալից հետևում է, որ Դավիթ և Գոռ Համբարձումյաններին մեղադրանք է առաջադրվել ինչպես **զենքի, այնպես էլ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ** խմբի կազմում բռնություն գործադրելով և գույքը ոչնչացնելով խուլիգանություն կատարելու համար:

Վճռաբեկ դատարանը, նախևառաջ անդրադառնալով վերջիններիս մեղադրանքներում առկա որպես զենք օգտագործվող առարկաների՝ մահակների, քարերի գործադրմամբ որոշակի գործողություններ կատարելուն, արձանագրում է, որ թեև դրանք հիմնավորվում են գործում առկա մի շարք վերաբերելի, թույլատրելի և արժանահավատ ապացույցների համակցությամբ, սակայն հաշվի առնելով, որ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքը որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ կատարելու որակյալ հատկանիշն էական բովանդակային փոփոխության է ենթարկվել և ՀՀ գործող քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում կարևորվել է առարկայի կամ միջոցի՝ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված լինելու հանգամանքը, ինչպես նաև հաշվի առնելով նշված օրենսդրական փոփոխության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ *Ռուսլամ Շավալյանի* գործով ձևավորած իրավական դիրքորոշումները[29], Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքում կատարված փոփոխության պայմաններում համապատասխան առարկայի կամ միջոցի գործադրման փաստը դեռևս բավարար չէ անձի արարքում՝ ծանրացնող հանգամանքի առկայությունը հավաստելու համար, այլ անհրաժեշտ են նաև տվյալներ առ այն, որ անձն առարկան կամ միջոցը նախապես պատրաստել կամ հարմարեցրել է տվյալ հանցանքը կատարելու դիտավորությամբ: Մինչդեռ, սույն գործում առկա չէ որևէ տվյալ առ այն, որ մեղադրյալներ Դ.Համբարձումյանը և

[28] Տե՛ս սույն որոշման 12-12.1-րդ կետերը:
[29] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Ռուսլամ Շավալյանի* գործով 2025 թվականի հուլիսի 11-ի թիվ ԵԴ/1157/01/19 որոշումը:

Գ.Համբարձումյանը համապատասխան առարկաները՝ մահակները, քարերը, նախապես պատրաստել կամ հարմարեցրել են, հետևաբար նրանց մեղադրանքներում առկա գործողությունները՝ որպես զենք օգտագործվող հիշյալ առարկաների գործադրմամբ կատարելու հանգամանքը չի կարող վերջիններիս մեղսագրվել:

31.1. Վճռաբեկ դատարանը վերոգրյալի հետ մեկտեղ անդրադառնալով Դավիթ և Գոռ Համբարձումյանների կողմից իրենց մեղսագրվող արարքը **զենքի գործադրմամբ** կատարելուն՝ հարկ է համարում նախ նշել, որ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ զենքի գործադրմամբ խուլիգանության ծանրացնող հանգամանքի վերաբերյալ *Ազատ Խլղաթյանի և Աշոտ Աթաբեկյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ նշված ծանրացնող հանգամանքը կարող է մեղսագրվել անձին, եթե զենքի օգտագործումը զուգորդվել է բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծելով: Ընդ որում, զենքի գործադրում ասելով պետք է հասկանալ կա՛մ նշված առարկաների փաստացի գործադրումը (օրինակ՝ կրակոց արձակելը, հարվածներ հասցնելը և այլն), կա՛մ գործադրման փորձը (դիտավորյալ գործողություններ, որոնք, սակայն, հանցավորի կամքից անկախ հանգամանքներում չեն հաջողվում), կա՛մ դրա սպառնալիքը (զենքը կամ որպես զենք օգտագործվող առարկաները ցուցադրելու կամ այլ եղանակով):

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով զենքի գործադրմամբ անձի նկատմամբ բռնություն, բռնության սպառնալիք գործադրելու կամ անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծելու հատկանիշների մեկնաբանմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված առարկաների օգտագործմամբ բռնություն գործադրելը ենթադրում է տուժողի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու, դիտավորությամբ կատարված ցանկացած ֆիզիկական ներգործություն: Զենքի գործադրմամբ բռնության սպառնալիքն անձի նկատմամբ հոգեբանական հարկադրանքի ձև է, որն արտահայտվում է հանցավորի կողմից ֆիզիկական բռնություն գործադրելու վերաբերյալ իր մտադրությունը բանավոր խոսքի կամ տարաբնույթ գործողությունների միջոցով տուժողին հայտնելով՝ զուգորդված զենքը

ցուցադրելով, տարբեր մարմնաշարժումներով, ժեստերով և այլն: Ընդ որում, սպառնալիքը պետք է լինի իրական, այսինքն՝ տուժողը բավարար հիմքեր պետք է ունենա վախենալու դրա իրականացումից: Ինչ վերաբերում է զենքի գործադրմամբ անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծելուն, ապա հարկ է նկատել, որ այն թեև ուղղված չէ որևէ կոնկրետ անձի նկատմամբ բռնություն կամ բռնության սպառնալիք գործադրելուն, այնուամենայնիվ իրականացվում է այնպիսի եղանակով, որը վտանգում է շրջապատում գտնվող անձանց կյանքն ու առողջությունը: Մասնավորապես, որպես այդպիսին կարող են գնահատվել հանրային վայրերում անկանոն կրակոցներ արձակելը, գույքը հանրավտանգ, այսինքն՝ այնպիսի եղանակով ոչնչացնելը կամ վնասելը, որն իրական վտանգ է ներկայացնում մարդու կյանքի կամ առողջության համար, ինչպես նաև անձանց կյանքն ու առողջությունը վտանգի տակ դնող զենքի գործադրման այլ դեպքերը:

Ընդ որում, պարտադիր չէ, որ նշված գործողությունների արդյունքում որևէ մեկին փաստացի վնաս պատճառվի, ինչպես նաև պարտադիր չէ ապացուցել, որ հանցավորը որևէ անձի կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծելու նպատակ է հետապնդել, այլ բավարար է հիմնավորել, որ հանցավորը գիտակցել է իր կողմից զենքի գործադրման արդյունքում անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծելու հանգամանքը և ցանկացել է հանցանքը հենց նման եղանակով կատարելը: Վճռաբեկ դատարանն ընդգծում է նաև, որ զենքի գործադրման արդյունքում անձանց կյանքի կամ առողջության համար ստեղծված վտանգը պետք է լինի իրական, այլ ոչ թե կարծեցյալ, ինչը հնարավոր է որոշել գործի բոլոր հանգամանքների համակողմանի վերլուծության արդյունքում՝ հաշվի առնելով, մասնավորապես, հանցագործության տեղը, ժամանակը, անձանց ներկայությունը, գործադրված զենքի տեսակը, ինչպես նաև հարցի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ[30]:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը, մեկ այլ որոշմամբ անդրադառնալով հանցակիցներից մեկի կողմից զենքի գործադրման դեպքում նշված ծանրացնող հանգամանքը մյուս հանցակիցներին մեղսագրելու հարցին,

[30] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Ազատ Խլղաթյանի և Աշոտ Աթաբեկյանի* գործով վերը վկայակոչված որոշումը:

իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ այն դեպքում, երբ հանցակիցները մինչև հանցանքի կատարումը զենքի կիրառման վերաբերյալ պայմանավորվածություն են ձեռք բերել, ինչպես նաև այն դեպքում, երբ հանցակիցները նախապես իմացել են, որ իրենցից մեկի մոտ առկա է զենք, որը կարող է օգտագործվել արարքը կատարելու ժամանակ և խմբի անդամները գիտակցել են դրա կիրառման հնարավորությունը, կամ իրենցից մեկի մոտ զենքի առկայության մասին հանցակիցներն իմացել են հանցագործությունը կատարելու ընթացքում և հանցանքի կատարումը շարունակել են արդեն դրա կիրառմամբ, ապա բոլոր հանցակիցների արարքը պետք է որակել զենքի գործադրմամբ կատարված[31]:

32. Սույն որոշման 16-16.2-րդ և 30-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և շարադրված իրավական դիրքորոշումների լուսի ներքո գնահատելով սույն քրեական գործով ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցները, այդ թվում՝ սույն որոշման 13.1-րդ կետում շարադրված ապացույցները, ինչպես նաև դրանց հիման վրա Առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները, դրանք համադրելով այդ մասով Առաջին ատյանի դատարանի հետևությունների և Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ և հիմնավորված են Դավիթ Համբարձումյանին զենքի գործադրմամբ խուլիգանություն կատարելու մեջ մեղավոր ճանաչելու մասին Առաջին ատյանի դատարանի հետևությունները: Մասնավորապես նման եզրահանգման գալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն քրեական գործով ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցները, ինչպես նաև դրանց հիման վրա Առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված հետևյալ փաստական հանգամանքները՝

- 2018 թվականի ապրիլի 22-ին Արարատի մարզի Հայանիստ-Հովտաշատ գյուղերի խաչմերուկում խուլիգանությունը կատարվել է խմբի կողմից, որի կազմում են եղել Դավիթ և Գոռ Համբարձումյանները,

- խմբի անդամների, այդ թվում՝ Դավիթ և Գոռ Համբարձումյանների կողմից երթին մասնակից քաղաքացիների նկատմամբ ձեռքերով, ոտքերով, ինչպես նաև

[31] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Ժիրայր Ղուկասյանի և մյուսների* գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ թիվ ԵԷԴ/0091/01/11 որոշումը:

տարբեր առարկաներով կիրառվել է բռնություն, ընդ որում՝ վկաների և տուժողների ցուցմունքների բովանդակությունից բխում է, որ առավել ակտիվ դեր ունեցել է Մասիսի քաղաքապետ Դ.Համբարձումյանը, ով անձամբ փակել է ճանապարհը, առաջինը հայհոյել և բռնություն գործադրել երթին մասնակցող քաղաքացու նկատմամբ, իսկ հետագայում բանակցել ցուցարարների և ոստիկանների հետ,

- խմբի մի քանի անդամներ եղել են զինված, դրա մասին են վկայում ինչպես սույն գործով տուժողների և վկաների ցուցմունքները, այնպես էլ արժանահավատության բարձր աստիճան ունեցող՝ սույն գործում առկա տեսանյութերը, որոնցից մեկում լսվում է կրակոցի 8 ձայն, իսկ մյուսում երևում է խմբի անդամներից մեկը՝ մեջքի հատվածում զենք պահած,

- միջադեպի ընթացքում խմբի անդամներից Դ.Համբարձումյանի մոտ եղել է զենք, մասնավորապես՝ ըստ տուժողներ **.**********-ի և **.**********-ի ցուցմունքների՝ վերջիններս Դ.Համբարձումյանի մոտ նկատել են զենք, իսկ ըստ վկա **.**********-ի ցուցմունքի՝ վերջինս զենքով մեքենայից կրակել է երթի մասնակիցների ուղղությամբ,

- միջադեպի ընթացքում խմբի անդամի կողմից հրազենի գործադրման հետևանքով **.*********-ին պատճառվել է աջ սրունքի միջին երրորդականի միջանցիկ հրազենային վնասվածք,

- նշված վնասվածքը հանդիսացել է հրազենային մուտքի թափանցող վնասվածք, որը կարող էր պատճառված լինել մոտ 5,5մմ-ից մինչև 9մմ տրամաչափ ունեցող գնդակով:

Ընդ որում՝ վերոնշյալ փաստական հանգամանքների ամբողջությունը վկայում է ինչպես Դ.Համբարձումյանի կողմից միջադեպի ընթացքում զենք կրելու և գործադրելու, այնպես էլ դրանով տուժողների կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծելու մասին:

Ինչ վերաբերում է Գոռ Համբարձումյանի կողմից զենքի գործադրմամբ խուլիգանություն կատարելուն, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ են Առաջին ատյանի դատարանի հետևություններն առ այն, որ վերջինիս արարքում նշված առավել որակյալ ծանրացնող հանգամանքը չի հաստատվում և

վերջինիս արարքը համապատասխանում է ոչ թե ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասին, այլ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին:

Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ Առաջին ատյանի դատարանը, տարբերակելով Դավիթ և Գոռ Համբարձումյանների գործողությունները, իրավամբ Գ.Համբարձումյանի նկատմամբ ինքնաբերաբար չի տարածել Դ.Համբարձումյանին վերագրված՝ զենքի գործադրմամբ խուլիգանության որակյալ հատկանիշը, ինչը համահունչ է նաև քրեական պատասխանատվության անհատականացման սկզբունքին: Իսկ գործի նյութերում, ի տարբերություն Դ.Համբարձումյանի, առկա չեն վերջինիս կողմից զենք կրելու կամ այն գործադրելու մասին բավարար փաստական տվյալներ, իսկ ինչ վերաբերում է դատախազի բողոքում վկայակոչված այն փաստարկներին, որ ստորադաս դատարանը հաշվի չի առել, որ Դ.Համբարձումյանը և Գ.Համբարձումյանը հարազատ եղբայրներ են, և վերջինս չէր կարող չիմանալ եղբոր մոտ զենքի առկայության և գործադրման մասին, բացի այդ Դ.Համբարձումյանի կողմից զենքի գործադրումից հետո Գ.Համբարձումյանը լրացրել է եղբոր գործողությունները, ինչը ևս հաստատում է Գ.Համբարձումյանի արարքում ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի առկայությունը, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այդպիսիք հիմնավոր չեն, չեն հաստատվում գործի նյութերով և ենթադրական բնույթի դատողություններ են:

33. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը Դավիթ և Գոռ Համբարձումյանների արարքներին քրեաիրավական գնահատական տալիս հանգել է հիմնավորված հետևության: Ուստի, Վերաքննիչ դատարանի կողմից Առաջին ատյանի դատարանի դատավճիռը Դավիթ և Գոռ Համբարձումյանների մասով բեկանելու հետևությունները հիմնավորված չեն:

34. Ամփոփելով ողջ վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն վարույթով դատական ակտ կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի պահանջների խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է վարույթի ելքի վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածի համաձայն՝ բողոքարկված դատական

ակտը համապատասխան մասով բեկանելու հիմք է: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը, Դավիթ Համբարձումյանին մեղավոր ճանաչելով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, իսկ Գոռ Համբարձումյանին՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի անհրաժեշտ է բեկանել Վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

35. Միաժամանակ, հաշվի առնելով մեղադրյալ Դ.Համբարձումյանի նկատմամբ նշանակված պատժի մասով Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված խախտումների վերաբերյալ մեղադրյալի պաշտպանների վերաքննիչ բողոքների փաստարկները, որոնք պաշտպանական կողմը ներկայացրել է նաև վերաքննիչ վարույթի շրջանակներում, Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու պայմաններում հարկ է համարում անդրադառնալ նաև մեղադրյալ Դ.Համբարձումյանի նկատմամբ նշանակված պատժի արդարացիության, համաչափության և այն կրելու նպատակահարմարության հարցերին: Այսպես՝ պատժի նշանակման համաչափության[32] և այն կրելու նպատակահարմարության[33] վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը, վերլուծելով Դ.Համբարձումյանի կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, խախտված հասարակական հարաբերության նշանակությունը, դրանք համադրելով Դ.Համբարձումյանի անձը բնութագրող տվյալների, նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող

[32] Տե՛ս, Վճռաբեկ դատարանի՝ *Ռուզաննա Գևորգյանի* գործով 2022 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԱՐԴ/0008/01/20 որոշման 24-րդ կետը և այդ որոշմամբ վկայակոչված վերաբերելի որոշումները:

[33] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Նարեկ Սարգսյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11, *Սամսոն Ամիրխանյանի* գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԱԴ/0034/01/12, *Մերոբ Սարգսյանի* գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ/0109/01/12, *Արսեն Մկրտչյանի* գործով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԼԴ/0093/01/12, *Մեյրան Աղաբանյանի* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0082/01/12, *Վանյա Բեգլյանի* գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԴ/0018/01/13, *Արամայիս Հովհաննեսյանի* գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ/0014/01/14, *Միհր Հովհաննիսյանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0039/01/15 և այլ որոշումները:

հանգամանքների առակայության և ծանրացնող հանգամանքների բացակայության հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը 2025 հոկտեմբերի 23-ի դատավճռով Դ.Համբարձումյանի նկատմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով 6 (վեց) տարի 3 (երեք) ամիս ժամկետով ազատազրկման ձևով պատիժ նշանակելու և այն կրելու նպատակահարմարության մասով հանգել է իրավաչափ հետևության:

Մասնավորապես, Դ.Համբարձումյանի կատարած արարքի բնույթի ու հանրության համար վտանգավորության աստիճանի, խախտված հասարակական հարաբերության նշանակության, վերջինիս անձը բնութագրող տվյալների առումով Վճռաբեկ դատարանը կարևորում է այն, որ Դ.Համբարձումյանը, քրեական օրենքով արգելված արարքը կատարելիս եղել է տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավար՝ Մասիս քաղաքի քաղաքապետ, և համայնքի ղեկավարի պաշտոնի կարգավիճակին և դրանից բխող վարքագծի չափանիշներին համապատասխանող վարքագիծ դրևորելու փոխարեն, Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում կայանալիք հանրահավաքին մասնակցելու նպատակով դեպի նշված հրապարակ կազմակերպած մասնակիցների խաղաղ երթն արգելելու, խոչընդոտներ ստեղծելու և նրանց տեղաշարժը կանխելու նպատակով իր կողմնակիցների հետ նախ՝ տևական ժամանակ առանց հաշվառման համարանիշների ավտոմեքենաներով փակել է ճանապարհը, ապա հայհոյանքներ հնչեցրել և բռնություն կիրառել խաղաղ ցուցարարների նկատմամբ, ինչի արդյունքում ոչ միայն վտանգվել է հասարակական անվտանգությունը և երթի մասնակիցները կրել են ֆիզիկական ու նյութական վնասներ, այլև լրջորեն ոտնահարվել է խաղաղ երթի մասնակիցների՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով երաշխավորված **հավաքների ազատության հիմնարար իրավունքը**: Ընդ որում՝ տվյալ դեպքում, Դ.Համբարձումյանի կատարած արարքի կատարման եղանակի ու դրա դրսևորման ձևի համատեքստում կարևորվում են նաև վերջինիս ակտիվ դերակատարումը, և վերոնշյալ գործողությունները զենքի գործադրմամբ կատարելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքներին՝ նախկինում դատապարտված չլինելուն, մեղմացնող հանգամանքներին՝ խնամքին 4

անչափահաս երեխա ունենալուն, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դրանք սույն որոշմամբ արձանագրված՝ կատարված արարքի հանրային բարձր վտանգավորության մասին վկայող փաստական տվյալների առկայության պայմաններում, չեն կարող ողջամտորեն նվազեցնել Դ.Համբարձումյանի կատարած արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և հիմք հանդիսանալ Առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված պատիժը մեղմացնելու կամ այն պայմանականորեն չկիրառելու համար:

Անդրադառնալով պաշտպանության կողմի՝ տարբեր վարույթներով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով ստորադաս դատարանների կողմից ավելի մեղմ պատժաչափ նշանակված լինելու վերաբերյալ փաստարկին՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ պատիժ նշանակելու գործընթացում ելակետային նշանակություն ունեն ՀՀ գործող քրեական օրենսգրքի 7-րդ և 69-րդ հոդվածներով ամրագրված՝ արդարության և պատասխանատվության անհատականացման ու պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները՝ այն հիմնարար դրույթները, որոնցով դատարանը ղեկավարվում է՝ արդարացի պատիժ նշանակելու համար: Նշված սկզբունքները դատարանին պարտավորեցնում են պատժի տեսակը և չափը որոշելիս որպես ելակետ ընդունել ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի այն հոդվածի սանկցիայի առավելագույն և նվազագույն սահմանները, որը մեղսագրվել է հանցագործություն կատարած անձին [34]: Ինչ վերաբերում է հոդվածի սանկցիայի շրջանակներում կոնկրետ պատժատեսակ և պատժաչափ ընտրելիս դատարանի հայեցողությանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն սահմանափակվում է օրենքով կանխորոշված որոշակի շրջանակներով՝ հանցագործությամբ պատճառված վնասի բնույթով և չափով, հանցագործության եղանակով, տեղով, ժամանակով, հանցագործության շարժառիթներով և նպատակներով, դիտավորության կամ անզգուշության տեսակով, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներով, ինչպես նաև նշանակվող պատժի՝ հանցավորի վերասոցիալականացման և

[3434] Տե՛ս *mutatis mutandis* Վճռաբեկ դատարանի *Արմեն Արզումանի* գործով 2020 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԱՐԴ1/0077/01/17 որոշումը:

իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընտանիքի կենսապայմանների վրա ազդեցությամբ:

Վճռաբեկ դատարանը, վերոնշյալի համատեքստում անդրադառնալով պաշտպանի վճռաբեկ բողոքի պատասխանում ներկայացված մտահոգություններին, գտնում է, որ դրանք հիմնավոր չեն: Այս առումով Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ պաշտպաններն իրենց վերաքննիչ բողոքներում ըստ էության վիճարկել են մեղադրյալի նկատմամբ նշանակված պատժի արդարացիության և համաչափության հարցը՝ առանց նոր փաստական հանգամանքներ ներկայացնելու, իսկ Վերաքննիչ դատարանը, չհիմնավորված պատճառաբանություններով գործը նոր քննության փոխանցելով, ինքն իրեն զրկել է նշված հարցերին անդրադառնալու հնարավորությունից, որպիսի պայմաններում, Վճռաբեկ դատարանը, քննարկելով մեղադրյալի նկատմամբ արդեն իսկ նշանակված պատժի արդարացիության հարցը և այդ առումով բողոքաբերների ներկայացրած փաստարկները, ապահովում է ինչպես պաշտպանների արդյունավետ դատական քննության հնարավորությունը, այնպես էլ բացառում է դատական շրջապտույտի, գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի խախտման և արդարադատության շահի անտեսման վտանգը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, նկատի ունենալով, որ Դ.Համբարձումյանը մինչդատական վարույթում՝ 2018 թվականի մայիսի 31-ից մինչև 2018 թվականի հունիսի 2-ը, 2018 թվականի հուլիսի 6-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 17-ը, այնուհետև դատաքննության ընթացքում՝ 2025 թվականի հոկտեմբերի 28-ից մինչև 2026 թվականի հունիսի 25-ը սույն գործով համապատասխանաբար 2 (երկու) ամիս 14 (տասնչորս) օր և 7 (յոթ) ամիս 28 (քսանութ) օր գտնվել է անազատության մեջ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է Առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված՝ 6 (վեց) տարի 3 (երեք) ամիս ժամկետով ազատազրկմանը ՀՀ գործող քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ հաշվակցել նրա անազատության մեջ գտնվելու՝ 10 (տասը) ամիս 12 (տասներկու) օր ժամկետը, և Դ.Համբարձումյանին թողնել կրելու ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 4 (չորս) ամիս 18 (տասնութ) օր ժամկետով՝ պատժի սկիզբը հաշվելով նրան փաստացի արգելանքի վերցնելու օրվանից:

36. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-րդ, 363-րդ և 385-387-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մեղադրյալներ Դավիթ Միերի Համբարձումյանի և Գոռ Միերի Համբարձումյանի մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 25-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի հոկտեմբերի 23-ի դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Դավիթ Միերի Համբարձումյանի նկատմամբ նշանակված՝ 6 (վեց) տարի 3 (երեք) ամիս ժամկետով ազատազրկմանը հաշվակցել մինչդատական վարույթի ընթացքում անազատության մեջ գտնվելու 2 (երկու) ամիս 14 (տասնչորս) օրը, ինչպես նաև դատաքննության ընթացքում անազատության մեջ գտնվելու 7 (յոթ) ամիս 28 (քսանութ) օրը և վերջնական թողնել կրելու ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 4 (չորս) ամիս 18 (տասնութ) օր ժամկետով՝ պատժի սկիզբը հաշվելով Դավիթ Միերի Համբարձումյանին փաստացի արգելանքի վերցնելու օրվանից:

3. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասերով թողնել անփոփոխ:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆ